

«ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն շինարարական նորմերը տարածվում են բնակավայրերում ավտոկայանատեղի շենքերի ու շինությունների (այսուհետ՝ ավտոկայանատեղի) նախագծման վրա, որոնք նախատեսված են ավտոմոբիլների (մինչև 3,5 տ-ն ներառյալ տեխնիկապես թույլատրելի առավելագույն զանգվածով) և այլ մոտոտրանսպորտային միջոցների կայանման (պահման) համար:

2. Սույն շինարարական նորմերը սահմանում են ավտոկայանատեղի ծավալահատակագծային, կոնստրուկտիվ լուծումներին ու ինժեներական համակարգերին ներկայացվող հիմնական դրույթներն ու պահանջները, որոնք վերաբերում են շարժիչային (բենզինային, դիզելային, գազային ու երկվառեղիքային (գազանման վառելիքով աշխատանքի ռեժիմով աշխատող)), ինչպես նաև էլեկտրամոբիլների և հիբրիդային տրանսպորտային միջոցների կայանմանը (պահմանը):

3. Սույն շինարարական նորմերի պահանջները չեն տարածվում ավտոկայանատեղի նկատմամբ, որոնք նախատեսված են.

1) 3.5 տ-ից ավելի տեխնիկապես թույլատրելի առավելագույն զանգվածով տրանսպորտային միջոցների կայանման (պահման) համար.,

2) հատուկ, վտանգավոր, ծանրաքաշ և (կամ) խոշորաչափ բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների կայանման (պահման) համար:

2" ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ

4. Սույն շինարարական նորմերում հղումներ են կատարված հետևյալ օրենսդրական ակտերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին:

1)	ՀՀ օրենք	«Քաղաքաշինության մասին»
2)	ՀՀ օրենսգիրք	ՀՀ Ջրային օրենսգիրք
3)	ՀՀ օրենք	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»
4)	ՀՀ կառավարության 02.02.2006թ. N160-Ն որոշում	«Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին»
5)	ՀՀ կառավարության 21.04.2023թ. N592-Ն որոշում	«Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ»
6)	ՀՀ կառավարության 16.02.2006թ. N 392-Ն որոշում	«Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգ»
7)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N 102-Ն հրաման	ՀՀՀՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»

8)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրաման	ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
9)	ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 13.04.2017թ. N 56-Ն հրաման	ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում»
10)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 79-Ն հրաման	ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»
11)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 12.12.2022թ. N 28-Ն հրաման	ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ»
12)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.05.2023թ. N 04-Ն հրաման	ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»
13)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ. N 12-Ն հրաման	ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում»
14)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ. N103-Ն հրաման	ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
15)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.06.2022թ. N 16-Ն հրաման	ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
16)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 15.01.2024թ. N03-Ն հրաման	ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
17)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 04.08.2004թ. N 83-Ն հրաման	ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»

18)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.03.2014 թ. N65-Ն հրաման	ՀՀՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. հիմնական դրույթներ»
19)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 31.03.2014թ. N93-Ն հրաման	ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր»
20)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 07.11.2022թ. N27-Ն հրաման	ՀՀՇՆ 31-02-2022 «Բնակելի շենքեր. Մաս II. Անհատական բնակելի տներ»
21)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ. N95-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03 «Հասարակական շենքեր և շինություններ»
22)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.02.2024թ. N10-Ն հրաման	ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմեր»
23)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 01.02.2024թ. N06-Ն հրաման	ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում»
24)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 23.05.2003թ. N32-Ն հրաման	ՀՀՇՆ III-9.02-02-03 «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր»

25)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 24.03.2014թ. N87-Ն հրաման	ՀՀՀՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ»
26)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 04.04.2022թ. N06-Ն հրաման	ՀՀՀՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ»
27)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N80-Ն հրաման	ՀՀՀՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»
28)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ. N253-Ն հրաման	ՀՀՀՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02- 05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»
29)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2017թ. N128-Ն հրաման	«Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»
30)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 27.09.2023թ. N08-Ն հրաման	ՀՀՀՆ 31-03.05-2023 «Բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքեր և շինություններ»
31)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.02.2024թ. N09-Ն հրաման	ՀՀՀՆ 31-03.06-2024 «Մարզական նշանակության օբյեկտներ. Ծածկված շենքեր և համալիրներ»

32)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 25.06.2024թ. N12-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. Հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ»
33)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.04.2025թ. N 10-Ն հրաման	ՀՀՇՆ 43-01-2025 «Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր
34)	ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ. N533-Ն հրաման	ՀՆ N 2.2.4-009-06 «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը»
35)	ՀՀ առողջապահության նախարարի 16.04.2009թ. N06-Ն հրաման	««Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2-III-2.13 սանիտարական կանոններ»
36)	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.06.2015 թ. N595-Ն հրաման	«Հրդեհային անվտանգության կանոններ»
37)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.05.2021թ. N41-Ն հրաման	«Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարձրացման առաջնահերթության գնահատման մեթոդաբանություն»

38)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.04.2025թ. N11-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.08-2025 «Առողջապահական օբյեկտներ. Առաջնային բուժօգնության շենքեր և շինություններ. Նախագծման նորմեր»
39)	ԳՕՍՏ 32144-2013	«Էլեկտրական էներգիա. Էլեկտրամագնիսական տեխնիկական միջոցների համատեղելիություն. ընդհանուր նշանակության Էլեկտրամատակարարման համակարգերում էլեկտրաէներգիայի որակի նորմեր»
40)	ԳՕՍՏ 34695.21-1-2020	«Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Մաս 21-1. Էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջներ՝ էլեկտրամոբիլի ներքին լիցքավորման սարքվածքը հաղորդալարերով փոփոխական կամ հաստատուն հոսանքի աղբյուրին միացնելու համար»
41)	ԳՕՍՏ ԻԷԿ 62196-1-2024	«Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Խրոցակներ (երկժանիներ), խրոցակային վարդակներ, շարժական վարդակներ և էլեկտրական ներանցման սարքեր տրանսպորտային միջոցների

		համար. Մաս I. Ընդհանուր պահանջներ»
42)	ԳՕՍՍ ԻԷԿ 62196-2-2024	«Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Խրոցակներ (երկժանիներ), խրոցակային վարդակներ, շարժական վարդակներ և էլեկտրական ներանցման սարքեր տրանսպորտային միջոցների համար. Մաս 2. Փոփոխական հոսանքի ցանցի ձողային հարակցիչների և արմատուրի տրամաչափային համատեղելիությանը և փոխադարձ փոխարինելիությանը ներկայացվող պահանջները»
43)	ԳՕՍՍ ԻԷԿ 61851-1-2017	«Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Մաս I. Ընդհանուր պահանջներ»
44)	ՀՍՍ ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 6469-1-2025	«Էլեկտրաքարշով ճանապարհային տրանսպորտ. Անվտանգության պահանջներ. Մաս 1. Էներգիայի կուտակման վերալիցքավորվող համակարգեր»
45)	ՀՍՍ ԳՕՍՍ Ռ 50571.7.722-2025	«Ցածրավոլտ էլեկտրակայանքներ. Մաս 7-713. Հատուկ էլեկտրակայանքներին կամ դրանց տեղադրման վայրերին ներկայացվող

		պահանջներ. Էլեկտրամոբիլների լիցքավորման աղբյուրներ»
46)	ԳՕՍՍ 14254-2015	«Պատյաններով ապահովվող պաշտպանության աստիճաններ (կոդ IP)»
47)	ԳՕՍՍ 12.1.004-91	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհային անվտանգություն. Ընդհանուր պահանջներ»
48)	ԳՕՍՍ 12.1.018-93	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհապայթ անվտանգություն, ստատիկ էլեկտրականություն. Ընդհանուր պահանջներ»

5. Սույն շինարարական նորմերից օգտվելիս պետք է ՀՀ ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի պաշտոնական կայքում ստուգել այն ստանդարտների գործողության վավերականությունը, որոնց հղում է կատարված:

3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6" Սույն շինարարական նորմերում կիրառվում են հետևյալ հասկացությունները, դրանց համապատասխան սահմանումներով.

- 1) **Ավտոկայանատեղի (կայանատեղ)**՝ շենք, շինություն կամ հատուկ բաց հարթակ՝ նախատեսված ավտոմոբիլների և այլ մոտոտրանսպորտային մոջոցների (մոտոցիկլետներ, մոտոսայլակներ, մոպեդներ, սկուտերներ եւ այլն) կայանման (պահման) համար:

- 2) **ավտոկանգառատեղ (կանգառատեղ, ավտոմոբիլ-տեղ)**՝ կարճատև կամ երկարատև ժամանակահատվածում ավտոկայանատեղում 1 ավտոմոբիլի կանգառի կամ կայանման համար նախատեսված տեղ՝ վճարովի կամ անվճար հիմունքներով,
- 3) **ավտոտնակ՝** մարդատար ավտոմոբիլների երկարաժամկետ պահման, տևական կայանման համար նախատեսված հիմնական կամ ոչ հիմնական շենքեր/շինություններ,
- 4) **անիվների շարժումը սահմանափակող սարքվածքներ (անիվների ամրակներ)**՝ սարքվածքներ, որոնք ամրացվում են ավտոկայանատեղի հատակի մակերևույթին կամ ճանապարհին՝ ավտոմոբիլի անիվների շարժը սահմանափակելու նպատակով:
- 5) **անվտանգության գոտի՝** տարբեր գործառնական (նպատակային) նշանակության օբյեկտների բնականոն գործունեությունը, քաղաքացիների և շահագործող անձնակազմի անվտանգությունն ու գույքի պաշտպանությունն ապահովող ինժեներական ենթակառուցվածքին հարակից տարածք,
- 6) **արտաքին շառավիղ՝** 180°-ով ավտոմոբիլի շրջադարձի նվազագույն շառավիղն է, որը որոշվում է ավտոմոբիլի արտաքին ճակատային անիվի հետքով, երբ ղեկը շրջվում է մինչև հենակի վերջը,
- 7) **բաց տիպի ավտոկայանատեղ՝** վերգետնյա ավտոկայանատեղ, որի արտաքին սահմանափակող կառուցվածքների չափաբաժինը 50 տոկոսից պակաս է,
- 8) **էլեկտրամոբիլ՝** ավտոմոբիլ, որը սնուցվում է էլեկտրական շարժիչով և լիցքավորվում է էլեկտրամատակարարման արտաքին աղբյուրից (տերմինալից),
- 9) **էլեկտրամոբիլների լիցքավորման կայան՝** կայան, որը կազմված է մեկ կամ մի քանի լիցքավորման սարքերից, նախագծված և կառուցված է էլեկտրամոբիլների միաժամանակյա լիցքավորման հնարավորությամբ և նախատեսված է բազմաբնակարան և հասարակական նշանակության շենքերի ստորգետնյա կամ վերգետնյա տարածքներում տեղակայելու, ինչպես նաև ավտոկայանատեղերում տեղակայման (կառուցման) և շահագործման համար,

- 10) **թեքանց, թեքամուտք, թեքահարթակ՝** կառուցվածք, որը նախատեսված է ավտոկայանատեղում ավտոմոբիլի մուտքի և ելքի անխոչընդոտ ապահովման համար,
- 11) **լիցքավորման սարք՝** սարքավորում, որը նախատեսված է էլեկտրաշարժիչով ավտոմոբիլի մարտկոցի լիցքավորումն ապահովելու համար,
- 12) **կանգառատեղ՝** մեկ ավտոմոբիլի համար նախատեսված ավտոկայանատեղ:
- 13) **կարմիր գիծ՝** բնակավայրի փողոցների (ներառյալ երթևեկելի մասերը և մայթերը), մայրուղիների, անցումների և հրապարակների տարածքը կառուցապատման համար նախատեսված տարածքից բաժանող սահման, շենքերի, շինությունների և կառույցների տեղակայումն իրականացվում է կարմիր գծով կամ դրանից հետնահանջով,
- 14) **հիբրիդային ավտոմոբիլ՝** ավտոտրանսպորտային միջոց, որը համալրված է էներգիայի երկու աղբյուրներից սնվող ներքին այրման (ICE) և էլեկտրական շարժիչներով,
- 15) **հյուրերի ավտոկայանատեղ՝** ավտոկայանատեղ, որը նախատեսված է հյուրերի ավտոմոբիլների կայանման համար,
- 16) **միկրոավտոբուս՝** վագոնային թափքով, մինչև 5.5մ երկարություն ունեցող ավտոմոբիլ, որը նախատեսված է ութ և ավելի ուղևորների համար,
- 17) **մեքենայացված ավտոկայանատեղ՝** ավտոկայանատեղ, որում ավտոմոբիլի տեղափոխումը պահպանման վայր իրականացվում է մեքենայացված սարքվածքների միջոցով՝ առանց վարորդի մասնակցության,
- 18) **նկուղային տարածք (ստորգետնյա հատված)՝** շենքի կամ շինության մաս, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն գտնվում է ± 0 նիշից (հողի մակարդակից) ցածր:
- 19) **հեղուկ վառելիքի բաշխման կայան՝** շինություն, որտեղ շարժիչային վառելիքը (բենզին, գազ և այլն) պահվում և համապատասխան սարքավորումներից մատուցվում է ավտոմոբիլներին,
- 20) **ավտոկայանատեղերի արդիականացում՝** շինարարական աշխատանքների տեսակ, որը կարող է իրականացվել ավտոկայանատեղերի շենքերի ու

շինությունների բնութագրային տվյալների բարելավման, շահագործողական հատկանիշների բարձրացման նպատակով,

- 21) **տրանսպորտային ենթակառուցվածք՝** ուղևորների և բեռնափոխադրումների համար նախատեսված ֆիզիկական, իրավաբանական անձանց ու պետության կարիքները բավարարող օբյեկտների և կառուցվածքների համալիր,
- 22) **փակ տիպի ավտոկայանատեղ՝** արտաքին պատերով առանձնացված ավտոկայանատեղ,
- 23) **փողոց, հրապարակ՝** բնակավայրի ճանապարհափողոցային ցանցի՝ կարմիր գծերով սահմանափակված ընդհանուր օգտագործման տարածք,
- 24) **փողոցային ավտոկայանատեղ՝** վճարովի կամ անվճար հիմունքներով գործող բացօթյա ավտոկայանատեղ, որը հարակից է փողոցային ցանցի երթևեկելի մասին կամ մայթին:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

7. Ավտոկայանատեղերը նախատեսվում են ավտոմոբիլների կարճաժամկետ կամ երկարաժամկետ կայանման համար: Դրանք դասակարգվում են ըստ քաղաքաշինական, ճարտարապետահատակագծային, կոնստրուկտիվ, գործառնական, տեխնոլոգիական առանձնահատկությունների:

8. Ավտոկայանատեղերն ըստ գործառնական նշանակության դասակարգվում են.

- 1) բնակիչների սպասարկման,
- 2) հյուրերի սպասարկման (բնակելի և հասարակական նշանակության շենքերի տեղամասերում),
- 3) մերձօբյեկտային (օբյեկտի կամ օբյեկտների խմբի կարիքների, ինչպես նաև դրանց այցելուների և աշխատակիցների սպասարկման համար),
- 4) իրավիճակային (անհրաժեշտություն առաջանալու դեպքում ավտոմոբիլների կանգառի կամ կայանման համար),

5) այլ:

9. Ավտոկայանատեղերն կարող են լինել՝

1) Վերգետնյա, ստորգետնյա և համակցված (վերգետնյա-ստորգետնյա),

2) բաց և փակ,

3) փողոցային (երթևեկելի մասի նշագծերով նշված ավտոկանգառատեղերի տեսքով) և արտափողոցային (երթևեկելի մասից հետնահանջով նախատեսված «գրպանիկների» տեսքով),

4) պարփակված (բոքսային/մանեժային տիպի),

5) առանձին կառուցված, ներկառուցված, կցակառուցված,

10. Կայանատեղերի քանակից կախված՝ ավտոկայանատեղերը բաժանվում են փոքր (մինչև 50 կայանատեղ), միջին (51-ից մինչև 300 կայանատեղ) և մեծ (ավելի քան 300 կայանատեղ) տարողունակության: Ավտոկայանատեղի շենքի չափերը որոշվում են ճարտարապետահատակաջծային առաջադրանքով:

11. Պատմության, մշակույթի և բնության հուշարձանների, թանգարանների, թատրոնների, ռեստորանային համալիրների, սրճարանների, զբոսայգիների (այդ թվում կենդանաբանական և բուսաբանական), հանգստի (այդ թվում՝ հյուրանոցների, մոթելների, քեմպինգների, իջևանատների), ժամանցի և տեսարժան այլ վայրեր այցելուների ավտոմոբիլների համար վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերը կազմակերպվում են դրանց հարակից (մոտակա) տարածքներում:

12. Հատուկ պահպանվող տարածքների հոդերում ավտոկայանատեղերի կազմակերպում չի թույլատրվում:

13. Քաղաքային ուղևորափոխադրումների (հանրային տրանսպորտային միջոցների) կանգառների գոտում արգելվում է տեղակայել ավտոկայանատեղեր և նախատեսել ավտոկանգառատեղեր (ավտոմոբիլ-տեղեր):

14. Բնակելի կառուցապատման գոտու վերակառուցման դեպքում պետք է իրականացվի ավտոկայանատեղերի կառուցում, վերակառուցում և արդիականացում՝ մեկ բնակարանի համար ոչ պակաս, քան 1.0 ավտոմոբիլ-տեղի չափով (1000 մարդու համար որպես ուղենիշ, կարելի է հաշվարկել 350 ավտոկանգառատեղ):

15. Հաշմանդամություն ունեցող անձանց ավտոմոբիլների հիմնական պահպանման համար առանձնացված ավտոկանգառատեղերի ստորգետնյա կամ վերգետնյա տեղամասերը պետք է նախատեսել բնակելի և հասարակական շենքերի մուտքերից մինչև 100-300 մ հետիոտնային հասանելիությամբ:

16. Ավտոկայանատեղերի ուղեմուտքերի ու ելքերի նվազագույն հեռավորությունը պետք է հաշվարկվի մինչև՝

- 1) մայրուղային փողոցների խաչմերուկներ՝ 50մ,
- 2) տեղական նշանակության փողոցների խաչմերուկներ՝ 40մ,
- 3) հանրային տրանսպորտի կանգառներ՝ 30մ:

17. Ավտոկայանատեղերի ընդհանուր պահանջարկը որոշելիս հաշվի են առնվում ավտոմոբիլների ապահովվածության և զարգացման մակարդակները՝ հավասարակշռելով առկա ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործման հետ: Բնակավայրերում ավտոկայանատեղերի տեղաբաշխման գլխավոր հատակագծերի և տեղակայման նախագծերի մշակման ժամանակ, ներառյալ շենքերից ու շինություններից հեռավորությունները, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀՇՆ 30-01-2023 շինարարական նորմերով՝ հիմք ընդունելով գործող տարածական պլանավորման փաստաթղթերի հիմնադրույթները:

18. Քաղաքային բազմահարկ կառուցապատման պայմաններում կարևորվում է բազմահարկ ավտոկայանատեղերի նախատեսումը, որոնք հատկապես ներկառուցվում են շենքերի ստորգետնյա կամ վերգետնյա հարկերում: Շենքերում ավտոկայանատեղի ներկառուցման անհնարինության դեպքում թույլատրվում է նախատեսել առանձին ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղեր:

19. Ներկառուցված փակ ավտոկայանատեղերը կարող են տեղակայվել ստորգետնյա և վերգետնյա ստորին առաջին-երրորդ հարկերում,

1) բնակելի նշանակության շենքերում, բացառությամբ վերգետնյա առաջին հարկից վեր,

2) հասարակական շենքերում՝ բացառությամբ նախադպրոցական ու դպրոցական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների շենքերի ու շինությունների,

3) I և II հրակայունության աստիճանի արտադարական շենքերում, որոնց տարածքները հրդեհային վտանգավորության առումով ունեն «Վ» «Գ» և «Դ» դասակարգում:

20. Ավտոկայանատեղերը թույլատրվում է տեղակայել նաև անկառուցապատ տարածքներում (փողոցների, հրապարակների, պուրակների, սիզամարգերի տակ՝ ստորգետնյա հատվածում):

21. Ստորգետնյա ավտոկայանատեղերի նախագծումն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով դրանց օգտագործման հնարավորությունը բնակչությանը պատասպարելու համար, որպես երկակի նշանակության կառույցներ՝ համաձայն ՀՀՇՆ 31-03.02-2022 շինարարական նորմերի:

22. Բազմահարկ ստորգետնյա և վերգետնյա փակ ավտոկայանատեղերի առաջին հարկերում անհրաժեշտ է նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների կայանատեղեր:

23. Հասարակական, բիզնեսի և արդյունաբերական կազմակերպությունների, ինչպես նաև հանգստի գոտիների և այլ զանգվածային այցելության օբյեկտների մոտ բաց ավտոկայանատեղերում անհրաժեշտ է նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների կայանատեղեր՝ համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի:

24. Բաց ավտոկայանատեղերում ավտոմոբիլների երկարատև կամ կարճատև կայանման (պահման) համար կայանատեղի (տարածքի) նվազագույն պահանջվող մակերեսը պետք է ընդունել 25 քմ մեկ հաշվարկային ավտոմոբիլի համար, իսկ փակ ավտոկայանատեղերում՝ կախված դրանց հարկերի քանակից, համաձայն աղյուսակ 1-ի:

Աղյուսակ 1

</>	Ավտոկայանատեղերի հարկերի քանակը	Կառուցապատման մակերես	Հողամասի չափը
		1 կայանատեղիի համար, մ2	
1.	1	25	30
2.	2	15	20
3.	3	10	14
4.	4	8	12
5.	5	6	10

6.	6	5	8
7.	7-9	4	6
8.	Որպես հաշվարկային տրանսպորտային միջոց ընդունվում է մինչև 6 մ երկարությամբ և մինչև 2.1 մ լայնությամբ հարաչափերով տրանսպորտային միջոցը:		
9.	Բերված ցուցանիշներում հաշվի են առնված նաև մանևրման տարածքը (մեկ մեքենայի համար նախատեսված կայանատեղիի ներքին անցումների ու մուտքերի տարածքը):		

24. Ավտոկայանատեղի տարողունակությունը, սպասարկող անձնակազմի համար նախատեսված սենքերի կազմը և տարածքի մակերեսը, ներառյալ տեխնիկական տարածքները, սանհանգույցները, դրանց ծավալահատակագծային լուծումները, մուտքի մոտ անցակետ կազմակերպելու և տարածքի ցանկապատման անհրաժեշտությունը սահմանվում են նախագծային առաջադրանքով՝ հաշվի առնելով սույն շինարարական նորմերի պահանջները:

25. Ավտոկայանատեղերի ծավալահատակագծային, կայանատեղի, ներքին անցումների ու այլ նախագծային լուծումների հարաչափերը սահմանվում են, այն տրանսպորտային միջոցների չափերով, որոնց համար նախատեսված են ավտոկայանատեղերը կամ կայանատեղին՝ հաշվի առնելով կայանման առանձնահատկությունները (կայանման անկյուն, շարքերի քանակ) ներքին մուտքերը, դրանց շրջադարձերի ամենափոքր շառավիղը, ինչպես նաև կայանված (պահվող) ավտոմոբիլի մոտեցման (պահպանության գոտիների) չափերը, շենքի կառուցվածքային տարրերից, սարքավորումներից և կայանման (պահման) տարածքում գտնվող այլ ավտոբիլներից հեռավորությունը և այլն:

26. Ավտոկայանատեղերում տեղակայված տեխնիկական սպասարկման կայանները (տեղամասերը, արհեստանոցները) պետք է բավարարեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի հիմնական պահանջներին:

27. Ավտոկայանատեղերը նախագծելիս կլիմայական հարաչափերը կիրառվում են՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 15.01.2024թ. N03-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի պահանջների:

28. Ավտոկայանատեղերի տեխնիկատնտեսական հիմնավորման փուլում, բնակելի տարածքներում աղմուկի ազդեցության նվազեցման նպատակով, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N79-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական և ՀՀ առողջապահության նախարարության 2002 թվականի մարտի 06-ի N138 հրամանով հաստատված N 2-III-11.3 սանիտարական նորմերի պահանջներով:

25. Ջրային համակարգերին և ջրային ռեսուրսներին հարակից տարածքներում նախատեսվող ավտոկայանատեղերը պետք է կազմակերպվեն ՀՀ Ջրային օրենսգրքի պահանջների ապահովմամբ:

26. Էլեկտրամոբիլների (այդ թվում՝ հիբրիդային) ավտոկայանատեղերում թույլատրվում է նախատեսել ներքին այրման շարժիչով ավտոմոբիլների համատեղ կայանում:

27. Էլեկտրամոբիլների (այդ թվում՝ հիբրիդային) լիցքավորման կայաններով/տերմինալներով կահավորված ավտոկայանատեղերը պետք է կազմակերպվեն ավտոկայանատեղի (վերգետնյա և ստորգետնյա հարկաբաժինների) ընդհանուր տեղերի առնվազն 5%-ի չափով:

28. Ավտոկայանատեղերում պարտադիր է էլեկտրամոբիլների (այդ թվում՝ հիբրիդային) լիցքավորման համար համապատասխան տերմինալների տեղակայումը:

29. Ստորգետնյա ավտոկայանատեղերում Էլեկտրամոբիլների կայանման կայանատեղիները կարող են հագեցած լինել լիցքավորման կայաններով/տերմինալներով միայն առաջին ստորգետնյա հարկում:

30. Ավտոկայանատեղերում Էլեկտրամոբիլների լիցքավորման համար նախատեսված կայանատեղին կամ կայանատեղերի խումբը պետք է երեք կողմից (այդպիսի կայանատեղի (կայանատեղերի խումբ) ազատ մուտքով) առանձնացված լինի հարակից կայանատեղերից՝ մեքենաների կանոնավոր կայանման համար՝ EI 45 հրակայունության դասի հակահրդեհային միջնապատերով:

31. Ավտոկայանատեղում էլեկտրամոբիլների (այդ թվում՝ հիբրիդային) լիցքավորման տերմինալների կազմակերպումը (ռիսկայնության աստիճանի դասակարգումը, քանակը, տեխնոլոգիական լուծումները) պետք է նախատեսել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.04.2025թ. N 10-Ն ռամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 «Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

32. Ավտոկայանատեղերում նախատեսվում են ելքեր, մուտքեր, հետիոտնային ուղիներ, այդ թվում հատուկ միջոցառումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ տակտիլային հատակներ, բազրիքներ, լուսավորություն, սանիտարական հանգույց, վերելակներ: Չի թույլատրվում ավտոկայանատեղերի միջով տարանցիկ հետիոտնային ուղիների-նախատեսումը:

33. Ավտոկայանատեղերից դեպի հետիոտնային ճանապարհներ տանող անցումները, նույն հարթությունում չպետք է հատեն ինտենսիվ շարժման մայրուղիները:

34. Բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող ավտոմոբիլային ճանապարհների հարակից հատվածում կազմակերպվող ավտոկայանատեղերի նկատմամբ առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի դեկտեմբերի 12-ի N28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերով:

35. Արտադրական կազմակերպության կամ վարչական շենքի մուտքից մինչև ավտոկայանատեղ հետիոտնային մատչելիությունը պետք է սահմանվի համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003թվականի մայիսի 23-ի N32-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ III-9.02-02-03 «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր» շինարարական նորմերի:

36. Ավտոկայանատեղերի համար, ըստ անշարժ աղբյուրներից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ցրման և ֆիզիկական ներգործության մակարդակների հաշվարկներով, անհրաժեշտ է սահմանել սանիտարապաշտպանական գոտի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

01.02.2024թվականի փետրվարի 1-ի N06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմերի պահանջների պահպանմամբ:

37. Բաց տիպի ավտոկայանատեղերին կից կարող են տեղադրվել ավտոմոբիլների լիցքավորման հեղուկ վառելիքի բաշխման կայաններ:

38. Անհատական բնակելի տունը կարող է ներառել ներկառուցված կամ կցակառուցված ավտոտնակ:

39. Երթևեկելի մասում նշագծված փողոցային ավտոկայանատեղ կարող է նախատեսվել, եթե շարժման տվյալ ուղղությամբ երթևեկելի մասի լայնությունը առնվազն 10 մ է:

40. Ավտոկայանատեղի տարածքի հիմնական մուտքերը պետք է տեղաբաշխել կարմիր գծից սպասարկվող ավտոմոբիլների հիմնական մոդելի կրկնակի երկարությունից ոչ պակաս հեռավորության վրա:

41. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի ավտոկայանատեղերում կանգառատեղերի (ավտոմոբիլ-տեղի) քանակը որոշվում է համապատասխան տեխնիկական առաջադրանքով:

42. Առևտրի և սպասարկման այլ օբյեկտների ավտոկայանատեղերում կանգառատեղերի (ավտոմոբիլ-տեղի) նվազագույն քանակը յուրաքանչյուր 100քմ օգտակար մակերեսի համար սահմանվում է 5:

43. Մինչև 100 քմ տարածքով առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար ավտոկայանատեղ կարող է չնախատեսվել:

44. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ավտոկայանատեղերում աշխատակիցների ավտոմոբիլների համար նախատեսվող կանգառատեղերի (ավտոմոբիլ-տեղի) նվազագույն քանակը հաշվարկվում է՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թվականի սեպտեմբերի 27-ի N08-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.05-2023 շինարարական նորմերի պահանջների համաձայն, իսկ ուսանողների համար՝ դրա 50% -ի չափով:

45. Մարզական օբյեկտի տարածքում ավտոկայանատեղերը պետք է նախատեսվեն աշխատակազմի, սպասարկման հարակից ծառայությունների

կազմակերպման, ինչպես նաև այցելուների մարդատար ավտոտրանսպորտային միջոցների, հեծանվորդների ու ինքնագլուխների կայանման համար՝ ելնելով օբյեկտի նախագծային հզորության հաշվարկային ցուցանիշներից: Դրանց ավտոկանգառատեղերի քանակը հաշվարկվում է՝ ելնելով միաժամանակյա թողունակությունից և մարզական կառույցի տարողունակությունից՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թվականի փետրվարի 19-ի N09-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.06-2024 շինարարական նորմերի պահանջների համաձայն:

46. Մարզական օբյեկտի ավտոկայանատեղի տարածքում կարող են նախատեսվել (առանձնացվել) մեծ քանակով ուղևորների (այցելուների) փոխադրման համար նախատեսված հանրային տրանսպորտային միջոցների (ավտոբուսների) կայանատեղեր՝ հաշվի առնելով այցելուների մեծ հոսքերի տարանջատման, արհեստական ժամանակավոր պատնեշների տեղադրման և անվտանգության ապահովումը:

47. Բնության գեղատեսիլ վայրերում, մշակույթի հուշարձանների մոտ կազմակերպվող հանգստի գոտիների տարածքներում ավտոկայանատեղեր պետք է նախատեսվեն՝

- 1) I կարգի ճանապարհներին կից՝ 20-40,
- 2) II կարգի ճանապարհներին կից՝ 15-20,
- 3) III, IV կարգի ճանապարհներին կից՝ 10 ավտոմոբիլի համար:

48. Հանգստյան գոտու տարածքում տեղակայված ավտոկայանատեղերում կարող են նախատեսվել ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման կետեր:

49. Հանգստյան գոտու տարածքում տեղակայված ավտոկայանատեղերը պարտադիր կարգով պետք է ունենան էլեկտրամոբիլների (այդ թվում հիբրիդային) արագ լիցքավորման առնվազն երկու սարք:

5. ԾԱՎԱԼԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

5.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

50. Ավտոկայանատեղերի տեղակայման տարածքը, ծավալահատակագծային, ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումները, դրանց կազմը սահմանվում են նախագծման առաջադրանքով:

51. Բնակավայրերում վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցման, վերակառուցման և շահագործման գործընթացներում պետք է պահպանվեն քաղաքաշինության, արտակարգ իրավիճակների և շրջակա միջավայրի ոլորտային իրավակարգավորումների պահանջները:

52. Բազմահարկ ավտոկայանատեղերը պետք է համալրված լինեն առնվազն 2 ելքով և 2 մուտքով:

53. Ավտոմոբիլների երկարատև կամ կարճատև կայանման (պահման) համար նախատեսված մեծ ավտոկայանատեղերի մուտքերի առաջ անհրաժեշտ է կազմակերպել կուտակման հարթակներ՝ ինտենսիվ «պիկ» ժամերին երթևեկությունը կարգավորելու համար: Նման հարթակներում մեքենա/տեղերի քանակը որոշվում է նախագծային առաջադրանքով, բայց չի կարող պակաս լինել ավտոմոբիլների երկարատև պահման համար նախատեսված կայանատեղերի ընդհանուր քանակի 0.5%-ից և ավտոմոբիլների ժամանակավոր կայանման համար նախատեսված 1.0%-ից:

54. Բազմահարկ (ստորգետնյա և վերգետնյա) ավտոկայանատեղիների կոնստրուկտիվ լուծումները պետք է նախատեսվեն/հաշվարկվեն այնպես, որ դիմակայեն բեռնվածքներին, ձյան և քամու ազդեցության ուժերին, ինժեներական սարքավորումների, ավտոմոբիլների ծանրությանը:

55. Ավտոկայանատեղերը պետք է նախագծվեն աղմկապաշտպան տեխնոլոգիական լուծումներով՝ հարակից տարածքներում առկա բնակելի և հասարակական շենքերի նկատմամբ աղմուկի թույլատրելի մակարդակ ապահովելու պայմանով:

56. Ավտոկայանատեղերի հարթակներում համալիր բարեկարգման տարրերի պարտադիր ցանկը ներառում է ծածկույթի կոշտ տեսակներ, մակերևույթների կցորդման տարրեր, բաժանարար տարրեր, լուսավորություն և տեղեկատվական սարքավորումներ: Ավտոմոբիլների երկարաժամկետ կայանման կամ պահպանման համար նախատեսված հարթակները կարող են ունենալ շվաքարաններ, բոքսերի թեթև ցանկապատեր, դիտահարթակներ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի հունիսի 21-ի N 12-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերի պահանջների պահպանմամբ:

57. Նախադպրոցական ու առողջապահական կազմակերպությունների շենքերում ներկառուցված ավտոկայանատեղին պետք է առանձնացվի ոչ բնակելի սենքեր ունեցող հարկաբաժնով՝ կայանվող ավտոմոբիլների արտանետվող գազերից և աղմուկից պաշտպանվելու համար:

58. Հրդեհաշիջման, հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքների, հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգի տեսակը, շիջման ձևը, կրակմարիչ միջոցները որոշվում են նախագծող կազմակերպության կողմից՝ կախված կառույցի տեխնոլոգիական, ծավալահատակագծային և այլ առանձնահատկություններից, հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01.01-2024 և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 շինարարական նորմերի, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թվականի հունիսի 18-ի N595-Ն հրամանով հաստատված հրդեհային անվտանգության կանոնների պահանջները:

59. Ավտոկայանատեղերի նախագծումը պետք է իրականացվի սեյսմիկ ազդեցությունների հաշվառմամբ՝ ապահովելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04-2020 շինարարական նորմերի պահանջները:

60. Ավտոկայանատեղերի մուտքերն ու ելքերը պետք է ապահովված լինեն բավարար տեսանելիությամբ և տեղակայվեն այնպես, որ ավտոմոբիլների տեղաշարժը չխանգարի հետիոտներին ու չխոչընդոտի հարակից տարածքում առկա երթևեկությանը:

61. Ավտոկայանատեղի տեսանելիության հաշվարկը պետք է իրականացվի հաշվի առնելով ավտոմոբիլի կանգառման համար անհրաժեշտ անվտանգ արգելակման հեռավորությունը:

62. Ավտոկայանատեղերում հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է նախատեսվեն թեքահարթակներ, վերելակներ, սանհանգույցներ, տարհանման և տեղաշարժման նշումով ուղեգծեր՝ ապահովելով ՀՀ կառավարության 2006թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջները:

63. Ավտոկայանատեղերի մուտքերն ու ելքերը պետք է ապահովվեն ճանապարհային անվտանգության նորմերը և կահավորված լինեն անվտանգության

նշաններով: Անվտանգության նշանների լուսավորությունը սահմանվում է ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմերով:

64. Ստորգետնյա և փակ տիպի վերգետնյա ավտոկայանատեղերում անհրաժեշտ է նախատեսել սանհանգույցներ (հասարակական զուգարաններ)՝ ապահովելով ՀՀ առողջապահության նախարարի 2009թվականի ապրիլի 16-ի N06-Ն հրամանով հաստատված N2-III-2.13 սանիտարական կանոնների պահանջները:

65. 50 և ավելի ավտոմոբիլ սպասարկող ստորգետնյա և փակ տիպի վերգետնյա ավտոկայանատեղերում՝ գլխավոր մուտքի մոտ, անհրաժեշտ է նախատեսել սպասարկող անձնակազմի աշխատանքային սենք, ինչպես նաև մաքրման սարքավորումների, սանհանգույցի համար նախատեսված պարագաների, հրդեհաշիջման առաջնային սարքավորումների, անձնական պաշտպանիչ սարքավորումների, հրդեհաշիջման գործիքների պահպանման համար կահավորված տարածքներ, անցակետ:

66. Ավտոկայանատեղերի և ավտոկանգառների համար սահմանվում է հեռավորություն քիմիական, կենսաբանական և ֆիզիկական վնասակար ներգործության աղբյուրից՝ սանիտարապաշտպանական գոտու նախատեսմամբ՝ ըստ մթնոլորտային օդի աղտոտվածության և ֆիզիկական գործոնների (աղմուկի, թրթռման, էլեկտրամագնիսական դաշտերի և այլն) ցրման հաշվարկների, հետազոտությունների և չափումների:

67. Փակ տիպի ավտոկայանատեղերում ընդհանուր թեքանցները պետք է անջատվեն (մեկուսացված լինեն) յուրաքանչյուր հարկում ավտոմոբիլների պահման սենքերից հակահրդեհային պատնեշներով, դարպասներով և/կամ նախամուտք-անցախցերով, հրդեհի դեպքում՝ օդի դիմհարով:

68. Հակահրդեհային պատնեշներում և նախամուտք-անցախցերում դռները և դարպասները պետք է սարքավորվեն հրդեհի դեպքում դրանք փակող ավտոմատ սարքերով:

69. Ավտոկայանատեղի ելքի (մուտքի) տեղերում՝ թեքանցի վրա կամ հարակից հրդեհային հատվածամասերում, ինչպես նաև վերնածածկի վրա (այնտեղ ավտոկայանատեղ տեղադրելու դեպքում) պետք է նախատեսվեն միջոցներ՝ հրդեհի

դեպքում վառելանյութի հնարավոր տարածումը կանխելու համար՝ համաձայն ԳՕՍՏ 12.1.004-91 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհային անվտանգություն. Ընդհանուր պահանջներ» և ԳՕՍՏ 12.1.018-93 «Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհապայթ անվտանգություն, ստատիկ էլեկտրականություն. Ընդհանուր պահանջներ»-ի:

70. Շենքերի վերնածածկը որպես ավտոմոբիլների կայանատեղ օգտագործելու դեպքում կիրառվում են նույն պահանջները, որոնք ներկայացվում են ավտոկայանատեղերի ծածկերին: Վերնածածկի վերին շերտը պետք է նախատեսել բոցը չտարածող նյութից:

71. Ավտոկայանատեղի հատակի պատվածքը պետք է կայուն լինի նավթամթերքի ազդեցության նկատմամբ:

72. Միջհարկային ծածկերը պետք է ունենան 6%-ից ոչ ավել թեքություն:

73. Փողոցային և ճանապարհային ցանցում տեղակայված էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների կանգառատեղի (ավտոմոբիլ-տեղի) հարաչափերը պետք է սահմանվեն առնվազն 3x6մ մակերեսով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թվականի ապրիլի 14-ի N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՀՆ 43-01-2025 շինարարական նորմերի համաձայն: Լիցքավորման սարքը պետք է տեղակայված լինի լիցքավորելու նպատակով կայանելու համար նախատեսված տարածքից ոչ ավելի, քան 1 մ հեռավորության վրա:

74. Ավտոկայանատեղը նախագծելիս մոտոցիկլետների և հեծանիվների համար պետք է կիրառել մարդատար ավտոմոբիլի մեկ տեղի մակերեսի նկատմամբ համապատասխանաբար 0.28 և 0.1 գործակիցներ:


75. Մարդատար ավտոմոբիլի կանգառատեղի (ավտոմոբիլ-տեղի) նվազագույն լայնությունը պետք է կազմի՝

- 1) 2.0 մետր՝ հասարակական օգտագործման ճանապարհների երկայնքով,
- 2) 2.3 մետր՝ այլ տարածքներում:


76. Ավտոմոբիլների կայանման կազմակերպումը կարող է նախատեսվել մայթերի կամ ավտոճանապարհների եզրերով՝ զուգահեռ, ուղղահայաց և թեք դասավորությամբ՝

- 1) կայանման կազմակերպում «Ա», երբ ավտոմոբիլների կայանումը կազմակերպվում է մայթին կամ ավտոճանապարհին զուգահեռ (Պատկեր 1):

2) կայանման կազմակերպում «Բ», երբ ավտոմոբիլների կայանումը կազմակերպվում է մայթին կամ ավտոճանապարհին ուղղահայաց (Պատկեր 2):




Պատկեր 1




Պատկեր 2


3) կայանման կազմակերպում «Գ», երբ ավտոմոբիլների կայանումը կազմակերպվում է մայթի կամ ավտոճանապարհի նկատմամբ թեք դասավորությամբ՝ 30° թեքությամբ (Պատկեր 3), 45° թեքությամբ (Պատկեր 4), 60° թեքությամբ (Պատկեր 5):



Պատկեր 3



Պատկեր 4



Պատկեր 5


77. Ավտոկանգառատեղերի դասավորվածությունից կախված՝ աղյուսակ 2-ում բերված են՝

- 1) մեկ ավտոկանգառատեղի նվազագույն մակերեսը (ներառյալ՝ մուտքը),
- 2) 100քմ մակերեսով ավտոկայանատեղում ավտոկանգառատեղերի (ավտոմոբիլ-տեղերի) առավելագույն քանակը,
- 3) 100մ երկարությամբ մեկգծանի ավտոկայանատեղում ավտոկանգառատեղերի առավելագույն քանակը:

Աղյուսակ 2

Հ/Հ	Ավտոկանգառատեղերի դասավորությունը	Մեկ ավտոկանգառատեղի նվազագույն մակերեսը (քմ)	100 քմ մակերեսով ավտոկայանատեղում ավտոկանգառատեղերի առավելագույն քանակը (հատ)	100մ երկարությամբ մեկգծանի ավտոկայանատեղում ավտոկանգառատեղերի առավելագույն քանակը (հատ)
1.	0° (Պատկեր 1)՝ զուգահեռ մայթին կամ ճանապարհին	22,5	4,4	17
2.	90° (Պատկեր 2)՝ ուղղահայաց ճանապարհին, մեկ ավտոկանգառատեղի լայնությունը՝ 2,5 մ	19,4	5,1	40
3.	30° (Պատկեր 3)	26,3	3,8	21
4.	45° (Պատկեր 4)	20,3	4,9	31
5.	60° (Պատկեր 5)	19,2	5,2	37

78. Հաշմանդամություն (տեղաշարժման սահմանափակում) ունեցող անձանց համար նախատեսված կայանատեղերը պետք է ապահովեն առնվազն 3.50 մ լայնություն (Պատկեր 6):



Պատկեր 6


79. Այն դեպքերում, երբ ավտոկայանատեղի սահմաններն ավարտվում են կողային ֆիզիկական արգելքով (պատ, պարիսպ, պատնեշ, այլ), եզրային ավտոկանգառատեղի լայնությունը պետք է մեծացվի նվազագույնը 0.1 մ-ով:

80. Ավտոկայանատեղի պատին զուգահեռ կայանելու դեպքում անիվների շարժումը սահմանափակող սարքվածքների հեռավորությունը պատից մինչև ավտոմոբիլի անիվի եզրը պետք է նախատեսել ոչ պակաս, քան 0.4 մ:

81. Ավտոկայանատեղի պատին ուղղահայաց կայանելու դեպքում անիվների շարժումը սահմանափակող սարքվածքների հեռավորությունը պատից մինչև ավտոմոբիլի անիվի կանգառի եզրը պետք է նախատեսել ոչ պակաս, քան 0,3 մ:

82. Եզրային ավտոկանգառատեղի և հարակից տարածքների միջև անհրաժեշտ է նախատեսել ֆիզիկական տարանջատում մայթից կամ ճանապարհից աղյուսե, բետոնե, քարե կամ այլ սահմանային եզր ունեցող պատնեշով, որը կարող է ծառայել նաև որպես բախման սահմանափակիչ:

83. Ավտոկայանատեղերի նախագծման փուլում պետք է հաշվարկվեն ավտոկանգառատեղերի պահանջվող ընդհանուր մակերեսը՝ մատչելիության գոտիները (ելքեր, մուտքեր) ներառյալ՝ հաշվի առնելով ավտոմոբիլների դասավորության տեսակը և այլ անհրաժեշտ ցուցանիշներ (Պատկեր 7):



Պատկեր 7

84. Ավտոկայանատեղերի նախագծային լուծումներում թեքահարթակների և երթևեկության ուղիների թեքությունները պետք է համապատասխանեն մուտքի ու ելքի հարմարության և անվտանգության չափանիշներին:

85. Բաց թեքահարթակներով ավտոկայանատեղի թեքությունները ավտոմոբիլների երկայնական առանցքի նկատմամբ պետք է լինեն ոչ ավել, քան 1%, լայնականի նկատմամբ՝ ոչ ավել, քան 4%:

86. Թեքանցների տեսակն ու թիվը, ըստ ավտոմոբիլների քանակի, պետք է ընդունել.

1) մինչև 100 ավտոմոբիլի համար՝ մեկ միաուղի թեքանց՝ համապատասխան ազդանշանման կիրառմամբ,

2) մինչև 500 ավտոմոբիլի համար՝ մեկ երկուղի թեքանց կամ երկու միաուղի թեքանցներ,

3) 500-ից ավել՝ երկու երկուղի թեքանցներ:


87. Պարուրածն թեքանցներ նախատեսվում է կիրառել այն դեպքերում, երբ տարածքի սահմանափակ չափերի պատճառով ուղղագիծ թեքահարթակներ նախատեսել հնարավոր չէ:

88. Ավտոկայանատեղերում թեքանցները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝

1) փակ ուղղագիծ թեքանցների երկայնական թեքությունը շարժման շերտերի առանցքի նկատմամբ պետք է լինի ոչ ավել, քան 15%, կորագիծ (պարուրածն) թեքանցներինը՝ 13%, բաց (մթնոլորտային տեղումներից չպաշտպանված) թեքանցների երկայնական թեքությունը՝ 10%,


2) թեքանցի լայնական թեքությունը պետք է լինի 6%-ից ոչ ավել,

3) ուղղագիծ թեքանցի նվազագույն լայնությունը միակողմանի երթևեկության դեպքում պետք է լինի 3,25 մ, իսկ երկկողմանի երթևեկության դեպքում՝ 6,5 մ (պատկեր 8),



Պատկեր 8

4) պարուրաձև թեքանցների նվազագույն լայնությունը միակողմանի երթևեկության դեպքում պետք է լինի 3,75 մ, իսկ երկկողմանի երթևեկության դեպքում՝ 7,6 մ: Երթևեկելի գոտու ներքին եզրը պետք է ունենա առնվազն 4 մ շառավիղ (պատկեր 9),



Պատկեր 9


5) հետիոտն շարժման թեքանցների վրա պետք է նախատեսել մայթ՝ 0.8մ-ից ոչ պակաս լայնությամբ,

6) թեքանցները պետք է կառուցվեն նախագծային լուծումներին համապատասխան՝ չսահող մակերևույթով (ծածկույթով) նյութերից: Թեքանցների թեքություններն անհրաժեշտ է ընդունել՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի հունիսի 21-ի N 12-Ն հրամանով սահմանված ՀՀՇՆ 30-02-2022 շինարարական նորմերի պահանջների: Ավտոկայանատեղի թեքանցները պետք է կահավորվեն ավտոմոբիլների անիվների շարժումը սահմանափակող, առնվազն 0,1 մ բարձրությամբ և 0,15 մ լայնությամբ ասարքվածքներով:

91. Բացօթյա և պատնեշավորված ավտոկայանատեղերում կարող են նախատեսվել ավտոկանգառատեղեր բարձրահարթակի վրա՝ գետնից վերև գտնվող հարկի կամ հարկերի տեսքով (Պատկեր 10): Երկու և ավելի հարկերի դեպքում միջհարկային

բարձրությունները հատակից մինչև հեծանների ներքին մակերևույթի նիշը պետք է գերազանցի ամենաբարձր ավտամոբիլի բարձրությունը առնվազն 0.2 մ-ով և լինի առնվազն 2.4 մ:


92. Ավտոկայանատեղի հարկի բարձրությունը (բացառությամբ մեքենայացված) չպետք է գերազանցի 4 մ-ը՝ մաքուր հատակի մակարդակից մինչև միջհարկային ծածկի առաստաղի մակարդակը: Մուտքերում անցման սահմանափակումներ սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել հրդեհաշիջման, ծխահեռացման և այլ ինժեներական համակարգերի կախման բարձրությունը:



Պատկեր 10

89. Բացօթյա և պատնեշավորված ավտոկայանատեղերի հարակից տարածքները պետք է բարեկարգվեն կանաչ գոտիներով, որոնք ստվերավորման միջոցով նպաստում են միկրոկլիմայի բարելավմանը, փոշու և աղտոտիչ նյութերի կլանմանը:

90. Ավտոմոբիլները կարող են կայանվել միմյանց վերևում՝ շարժական հարթակի շնորհիվ, որը կարող է գործել էլեկտրական կամ հիդրավլիկ կառավարման միջոցով: Ավտոկանգառատեղի բեռնատարունակությունը պետք է հաշվարկել 2500 կգ մեկ ավտոմոբիլի համար: Մուտքի և ելքի ուղիների առավելագույն թեքությունը՝ 14 %: Հարթակների երկարությունը պետք է նախատեսել 5,3-5,4 մ: Բացօթյա տարածքում թույլատրվում է նախատեսել միայն հորիզոնական հարթակներով համակարգեր (Պատկեր 11):



Պատկեր 11

91. Մոդուլային հավաքովի ավտոկայանատեղը ստանդարտ տարրերից հավաքված կառուցվածք է, որը հնարավոր է ապամոնտաժել առանց այն վնասելու (ժամանակավոր կառուցվածք): Ավտոկանգառատեղերը տեղադրվում են կայանատեղիներ հարկ առ հարկ: Կառուցվածքը տեղադրվում է կրող երկաթբետոնե սալի կամ հավաքովի հիմքի վրա:

92. Մոդուլային հավաքովի ավտոկայանատեղերը կարող են լինել մանեժային, մեքենայացված և կիսամեխանիզացված տեսակի:

93. Մոդուլային հավաքովի ավտոկայանատեղերը պետք է հագեցած լինեն լուսավորության սարքավորումներով և անվտանգության արգելապատնեշներով:

5.2. ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ

94. Նոր կառուցվող և վերակառուցվող ստորգետնյա ավտոկայանատեղերը մինչև վերգետնյա հարկաբաժին պետք է կահավորված լինեն մարդատար վերելակներով, շարժասանդուղքներով և այլ վերհան սարքերով՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման պարտադիր պահանջները:

95. Երկուսից ավելի հարկաբաժին ունեցող ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղերում անհրաժեշտ է նախատեսել առնվազն 2 վերելակ:

96. Ավտոկայանատեղերում թեքանցների թիվը և, համապատասխանաբար, ելքերի ու մուտքերի անհրաժեշտ քանակը որոշվում են՝ կախված բոլոր հարկերում (բացի

առաջինից) ավտոմոբիլների քանակից (ստորգետնյա ավտոկայանատեղերի համար՝ բոլոր հարկերում)՝ հաշվի առնելով ավտոկայանատեղի օգտագործման ռեժիմը, շարժման հաշվարկային ինտենսիվությունը և նրա կազմակերպման հատակագծային լուծումները:

97. Ստորգետնյա ավտոկայանատեղերը, որպես կանոն, կարող են նախատեսվել 5 ստորգետնյա հարկից ոչ ավել: Թույլատրվում է նախատեսել ստորգետնյա ավտոմատացված ավտոկայանատեղեր մինչև 9 հարկ ներառյալ:

98. Ստորգետնյա ավտոկայանատեղերում պետք է կիրառվի լրացուցիչ արհեստական (էներգաարդյունավետ) լուսավորում՝ համակցված լուսավորման համակարգ և պահուստային լուսավորում՝ աշխատանքային լուսավորման անջատման դեպքում՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմերի համաձայն:

99. Ջրատարների և ջրամատակարարման համակարգի ցանցերի ստորգետնյա տեղադրման խորությունը որոշելիս պետք է հաշվի առնել ստորգետնյա ավտոկայանատեղերի հետ փոխհատվելու պայմանները՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թվականի դեկտեմբերի 28-ի N103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.02-2020 շինարարական նորմերի համաձայն:

100. Ջրահեռացման համակարգի օբյեկտների գետնափոր (ստորգետնյա, որմնախարսխային, կիսանկուղային) շենքերը պետք է տեղակայված լինեն ստորգետնյա ավտոկայանատեղերից առնվազն 10մ հեռավորության վրա՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի հունիսի 8-ի N16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 շինարարական նորմերի համաձայն:

101. Ստորգետնյա և պատնեշապատված ավտոկայանատեղերի շահագործվող տանիքին թույլատրվում է ձևավորել հանգստի համար նախատեսված միջավայր՝ մանկական, մարզական, խաղային և այլ հարթակներ՝ օդափոխիչ հորերից, ելումուտներից, անցումներից 15մ հեռավորությամբ, շահագործվող տանիքի կանաչապատման և ելանցքից դեպի մթնոլորտ արտանետման ՀՀ կառավարության 02.02.2006թ. «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու

մասին» N 160-Ն որոշմամբ սահմված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) ապահովման պայմանով:

102. Ստորգետնյա և պատնեշապատված ավտոկայանատեղերի շահագործվող տանիքի ջրամեկուսիչ գորգի հիմքը խորհուրդ է տրվում կառուցել կամ ե/բ կրող սալերի տեղադրման, կամ ե/բ մոնոլիտ ծածկի ստեղծման միջոցով: Ե/բ կրող սալերի տեղադրման դեպքում սալերի միջև կարերն պետք է մշակել B7,5 դասի բետոնով:

103. Ստորգետնյա և պատնեշապատված ավտոկայանատեղերի շահագործվող տանիքներն անհրաժեշտ է կազմակերպել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 22-ի N13-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04-2022 շինարարական նորմերի համաձայն:

104. Ստորգետնյա ավտոկայանատեղերում երկու և ավելի ստորգետնյա հարկերի դեպքում ելքերը ստորգետնյա հարկերից դեպի սանդղավանդակները և ելքերը վերելակային հորաններից պետք է նախատեսել հրդեհային անվտանգության պահանջների պահպանմամբ՝ օդի պատվար ունեցող հարկերի միջոցով:

105. Ստորգետնյա ավտոկայանատեղերում հրդեհաշիջման համակարգերը պետք է նախատեսվեն հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01.01-2024 և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.01-2014 շինարարական նորմերի համաձայն (այդ թվում հրդեհաշիջումից հետո ջրահեռացման համար):

106. Հերթապահ և սպասարկող անձնակազմի ծառայողական սենքերը, հրդեհաշիջման և ջրամատակարարման պոմպակայանները, տրանսֆորմատորային ենթակայանները (միայն չոր տրանսֆորմատորներով), հաճախորդների ուղեբեռների համար պահեստանոցները, հաշմանդամություն ունեցող անձանց համար սենքերը առավել նպատակահարմար է նախատեսել առաջին (վերին) ստորգետնյա հարկից ոչ ցածր: Հարկերի վրա այլ տեխնիկական սենքերի տեղաբաշխումը չի կանոնակարգվում: Նշված սենքերը պետք է առանձնացված լինեն ավտոմոբիլների պահման սենքերից 1-ին տիպի հակահրդեհային միջնապատերով:

107. Փակ ավտոկայանատեղերում էլեկտրամոբիլները և հիբրիդային ավտոմոբիլները թույլատրվում է լիցքավորել միայն մինչև 32A անվանական հոսանք

ունեցող լիցքավորման սարքերով (դանդաղ լիցքավորում): Էլեկտրամոբիլները և հիբրիդային ավտոմոբիլները լիցքավորելու համար պետք է օգտագործել մասնագիտացված սարքեր՝ լիցքավորման կայաններ:

5.3. ՓԱԿ ՏԻՊԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ

108. Պահանջվող հրակայունության աստիճանը, թույլատրելի հարկայնությունը և հրդեհային հատվածամասի սահմաններում հարկի մակերեսը պետք է ընդունել՝ ըստ աղյուսակ 3-ի:

Աղյուսակ 3

Հ/ Հ	Շենքերի (շինությունների) հրակայունության աստիճանը	Շենքերի (շինությունների) կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորության դասը	Հրդեհային հատվածամասի հարկայնությունը	Հարկի մակերեսը հրդեհային հատվածամասի սահմաններում (մ²)	
				միահարկ շենքեր	բազմաբնակարան/բազմաֆունկցիոնալ շենքեր (2 և ավելի հարկաբաժիններով)
1"	I, II	C0	9	10400	5200
2"		C1	2	5200	2000
3"	III	C0	5	7800	3600
4"		C1	2	3600	1200
5"	IV	C0	1	5200	
6"		C1	1	3600	
7"		C2, C3	1	1200	
8"	V	չի նորմավորվում	1	1200	

109. Առաջին և երկրորդ աստիճանի հրակայունությամբ ավտոկայանատեղերի շենքերում, անհրաժեշտության դեպքում, կարող են նախատեսվել առանձնացված բոքսեր ավտոմոբիլների երկարատև պահման համար:

110. Բոքսերի միջև միջնապատերը պետք է ունենան R 45 հրակայունության սահման և հրդեհային վտանգավորության Կ0 դաս, դարպասները այդ բոքսերում պետք է նախատեսվել ցանցաձև ցանկապատի տեսքով, կամ յուրաքանչյուր բոքսի դարպասը 1.4-1.6մ բարձրության վրա պետք է ունենա անցքեր ոչ պակաս, քան 300x300մմ²

չափսերի՝ մարման միջոցներ մատուցելու և բոքսի հակահրդեհային վիճակի հսկողություն իրականացնելու համար: Յուրաքանչյուր բոքսից անմիջականորեն դուրս տանող ելքի առկայության դեպքում I, II և III աստիճանի հրակայունության երկհարկանի շենքերում և CO դասի միահարկ շենքերում թույլատրվում է նախատեսել միջնապատեր՝ չնորմավորվող հրակայունության սահմանով՝ չայրվող նյութերից: Այդ դեպքում նշված երկհարկանի շենքերի ծածկերը պետք է լինեն հակահրդեհային 3-րդ տիպի: Այս բոքսերի դարպասները նույնպես պետք է ունենան անցքեր ոչ պակաս, քան 300x300մմ² չափսերի՝ մարման միջոցներ մատուցելու և բոքսերի հակահրդեհային վիճակի հսկողություն իրականացնելու համար:

111. Վերգետնյա ավտոկայանատեղերը, որպես կանոն, կարող են նախատեսվել 9 հարկից ոչ ավել բարձրությամբ:

112. Փակ տիպի վերգետնյա ավտոկայանատեղերի տեղակայման դեպքում պետք է պահպանվեն մերձշենքային տարածքի՝ անհրաժեշտ տարրերով բարեկարգման ապահովվածության նորմատիվ պահանջները:

113. Փակ տիպի ավտոկայանատեղերում, այդ թվում՝ թեքահարթակներից, դարպասներից, ցցված շինությունների, կոմունալ գծերի կամ կախովի սարքավորումների եզրային նիշից մինչև հատակը բարձրությունը պետք է լինի նախատեսվող ամենաբարձր ավտոմոբիլի բարձրությունից 0.2 մ-ով ավելի, բայց ոչ պակաս, քան 2 մ:

114. 10 մ և ավելի բարձրություն ունեցող բազմահարկ ավտոկայանատեղերը դեպի շենքի տանիք պետք է ունենան տարիանման առնվազն երկու ելք:

115. Մարդկանց տարիանման երթուղիների վրա անցումների բարձրությունը պետք է լինի առնվազն 2 մ: Սանդուղքները՝ որպես տարիանման ուղիներ, պետք է ունենան առնվազն 1մ լայնություն:

5.4. ԲԱՑ ՏԻՊԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ

116. Բացօթյա ավտոկայանատեղերից այլ օբյեկտներ հեռավորությունը պետք է հիմնավորվի անշարժ աղբյուրներից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ցրման և ֆիզիկական ներգործության մակարդակների հաշվարկներով:

117. Օդափոխումը դժվարացնող բոքսերի, պատերի (բացառությամբ սանդղավանդակների պատերի) և միջնապատերի կառուցում չի թույլատրվում: Անհրաժեշտության դեպքում քաղաքացիներին պատկանող մարդատար ավտոմոբիլների պահման տեղերի առանձնացման համար թույլատրվում է չայրվող նյութերից ցանցաձև ցանկապատի կիրառում:

118. Հարկանջատ քիվապատերի բարձրությունը չպետք է գերազանցի 1մ:

119. Արտաքին պատող կոնստրուկցիաների բաց բացվածքների համար որպես լցանյութ թույլատրվում է չայրվող նյութերից ցանցերի կիրառումը: Այս դեպքում պետք է ապահովվի հարկի միջանցիկ օդափոխությունը:

120. Մթնոլորտային տեղումների ազդեցության նվազեցման համար բաց բացվածքների վրա կարող են նախատեսվել հովարներ՝ չայրվող նյութերից: Այս դեպքում պետք է ապահովվի հարկի միջանցիկ օդափոխումը:

121. Չորրորդ աստիճանի հրակայունության շենքերում տարհանման սանդղավանդակի պատող կոնստրուկցիաները և դրանց տարրերը պետք է համապատասխանեն երրորդ աստիճանի հրակայունության շենքերի սանդղավանդակներին ներկայացվող պահանջներին:

122. Ծխահեռացման և օդափոխության համակարգերի նախատեսում չի պահանջվում:

123. Բացօթյա ավտոկայանատեղերում պետք է նախատեսվել հրդեհաշիջման առաջնային միջոցների պահման համար ջեռուցվող սենք:

5.5. ՄԵՔԵՆԱՅԱԳՎԱԾ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ

ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

124. Մեքենայացված ավտոկայանատեղերի (ներառյալ բազմահարկ) պաշտպանության համար կիրառվում են հարկադիր գործարկմամբ սպրինկլերային կայանքներ՝ ՀԳՍ:

125. Մեքենայացված սարքվածքների հրդեհային անվտանգության ղեկավարումը և հսկողությունը նրա աշխատանքի նկատմամբ պետք է իրականացվեն կայանման հարկում տեղադրված կարգավարման սենքից:

126. Մեքենայացված ավտոկայանատեղերի շենքերը կարող են նախատեսվել վերգետնյա՝ կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորության CO դասով: Ավտոկայանատեղերը թույլատրվում է նախագծել՝ օգտագործելով չպաշտպանված մետաղական հիմնակմախք և չայրվող նյութերից պատող կոնստրուկցիաներ՝ առանց այրվող ջերմապաշտպանիչների: Մեքենայացված ավտոկայանատեղերը թույլատրվում է կցակառուցել այլ նշանակության շենքերին՝ միայն դրանց խուլ պատերին, REI 150 հրակայունության սահմանով:

127. Ավտոկայանատեղերում մեքենաների ուղղահայաց համակարգով աշխատող մեխանիզացված կայանման մոդուլների նախատեսման դեպքում հարկի բարձրությունը որոշվում է մոդուլների նախագծային և տեխնիկական առանձնահատկությունները հաշվի առնելով և չի կարող լինել 9 մ-ից բարձր: Այս դեպքում անհրաժեշտ է տեղադրել ավտոմատ հրդեհաշիջման համակարգ, որը նախատեսում է հարկի յուրաքանչյուր կայանատեղ ջուր մատակարարելու հնարավորություն:

128. Ավտոկայանատեղերը մի քանի բլոկից խմբավորելու անհրաժեշտության դեպքում դրանք պետք է անջատվեն 1-ին տիպի հակահրդեհային միջնապատերով:

129. Մեքենայացված ավտոկայանատեղի յուրաքանչյուր բլոկ պետք է ապահովված լինի հրշեջ մեքենաների համար մոտեցումով և հրշեջ ջրկատների՝ դեպի ցանկացած հարկ մուտքի հնարավորությամբ, ավտոկայանատեղի (ապակեպատված կամ բաց բացվածքների միջով) երկու հակադիր կողմերից:

130. Մեքենայացված ավտոկայանատեղի հատվածամասի հարկերում (հարկաբաժիններում) մեքենայացված սարքվածքների տեխնիկական սպասարկման համար թույլատրվում է չայրվող նյութերից բաց սանդուղքի տեղակայում:

6. ԻՆՑԵՆԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

6.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

131. Ավտոկայանատեղերի ինժեներական համակարգերն ու դրանց ինժեներական սարքավորումները պետք է նախատեսել՝ հաշվի առնելով ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև սույն շինարարական նորմերը:

132. Ավտոկայանատեղերում հրդեհաշիջման ջրի ծախսի և օդափոխության համակարգերի նկատմամբ պահանջները պետք է ընդունել՝ հաշվի առնելով B կարգի հրդեհային վտանգավորությանը դասվող պահեստային շենքերի համար սահմանված պահանջները:

133. Ավտոկայանատեղերի բազմահարկ շենքերում ծածկերի միջով անցնող ինժեներական հաղորդակցուղիները պետք է կառուցվեն մետաղական խողովակներից:

134. Փակ տիպի ավտոկայանատեղերում տարհանման ելքերի դռները պետք է ազատ բացվեն դեպի դուրս:

135. Ավտոկայանատեղի բաց հարթակներում համալիր բարեկարգման տարրերի պարտադիր ցանկը ներառում է ծածկույթի կոշտ տեսակներ, մակերևույթների կցորդման տարրեր, բաժանարար տարրեր, լուսավորություն և տեղեկատվական սարքավորումներ:

136. Բնակելի կառուցապատման տարածքներում ավտոկայանատեղերի աղմուկը խլացնելու համար շինարարաձայնագիտական եղանակներով պետք է նախատեսված լինեն սանիտարապաշտպանիչ գոտիներ (ըստ աղմուկի գործոնի):

137. Ավտոմոբիլների երկարաժամկետ կայանման կամ պահպանման համար նախատեսված բաց հարթակները կարող են հագեցած լինել շվաքարաններով, բոքսերի թեթև ցանկապատերով, դիտահարթակներով:

138. Ավտոկայանատեղի բաց հարթակների մակերևույթի թեքությունը պետք է ապահովի մակերևութային, մեխանիկական (ինքնահոս) ջրահեռացում:

139. Ավտոկայանատեղի բաց հարթակների առավելագույն թեքությունները սահմանվում են՝ տրանսպորտային և հետիոտնային երթևեկության պայմաններից ելնելով:

140. Ավելի քան 500 ավտոմոբիլ/տեղ տարողությամբ վերգետնյա ավտոկայանատեղերը պետք է տեղակայվեն ինժեներական ենթակառուցվածքների, տրանսպորտի օբյեկտների և արտադրական գոտիների տարածքներում:

141. Ներկառուցված կամ կցակառուցված ավտոկայանատեղերի ինժեներական համակարգերը պետք է լինեն այդ շենքերի ինժեներական համակարգերից առանձին: Եթե ավտոկայանատեղերի սենքերը տարանցիկ հատվում են այն շենքին պատկանող ինժեներական հաղորդակցուղիներով, որին ներկառուցված է (կցակառուցված) ավտոկայանատեղ (բացի ջրամատակարարման համակարգի, կոյուղու,

ջերմամատակարարման մետաղական խողովակներից), նշված հաղորդակցուղիները պետք է մեկուսացված լինեն EI 45-ից ոչ պակաս հրակայունության սահմանով շինարարական կոնստրուկցիաներով:

142. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորման սարքեր տեղադրելիս (այդ թվում՝ բոքսերում)-անհրաժեշտ է, որ

1) լիցքավորման սարքերը տեղակայված լինեն ավտոկայանատեղի մուտքերի և մարդկանց համար նախատեսված անցումների երկայնքով,

2) էլեկտրական ցանցերը հագեցած լինեն ավտոմատ անջատիչներով և մնացորդային հոսանքով կառավարվող պաշտպանիչ սարքերով,

3) լիցքավորման սարքերը ավտոմատ կերպով անջատվեն հրդեհային պաշտպանության համակարգերի ակտիվացման մասին ազդանշան ստանալուց հետո:

143. Էլեկտրամոբիլները և հիբրիդային ավտոմոբիլները լիցքավորելու համար պետք է օգտագործել սերտիֆիկացված լիցքավորման սարքեր:

144. Լիցքավորման սարքը պետք է տեղակայված լինի էլեկտրամոբիլի կամ հիբրիդային ավտոմոբիլի լիցքավորման նպատակով կայանման համար նախատեսված տարածքից ոչ ավելի, քան 1 մ հեռավորության վրա:

145. Ստորգետնյա ավտոկայանատեղում գրունտային և այլ ջրերի ներթափանցումը կանխելու նպատակով, անհրաժեշտ է իրականացնել ջրամեկուսացում:

6.2. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄ

146. Ավտոկայանատեղից հեռացվող կեղտաջրերի հաշվարկային ծախսը պետք է որոշվի միաժամանակյա գործող սարքավորումների ելքերը գումարելու միջոցով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թվականի մարտի 17-ի N80-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.01-2014 շինարարական նորմերի համաձայն:

147. Ավտոկայանատեղում գործող ավտովազման կետում կեղտաջրերի տեղական մաքրման սարքավորումները պետք է նախագծել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թվականի հունիսի 8-ի N 16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 շինարարական նորմերի համաձայն: Կեղտաջրերի հեռացման

վայրը և պայմանները որոշվում են նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

148. Կեղտաջրերի հավաքման համար նախատեսված հոսակները պետք է տեղադրվեն ավտոմոբիլների անցումային ուղիների վրա:

149. Հակահրդեհային հիդրանտները և փականային հորերը պետք է տեղադրվեն փակ տիպի վերգետնյա ավտոկայանատեղերի կողաճակատային կողմերում:

150. Հրդեհաշիջման սարքավորումների միացնող գլխիկների տեղադրման վայրերի լուսային ցուցիչները, հրդեհային հիդրանտների տեղադրման վայրերը պետք է ավտոմատ կերպով միացվեն, երբ ավտոմատ հրդեհաշիջման համակարգը գործարկվում է:

151. Ավտոմոբիլների շարժման ուղղության լուսային ցուցիչները տեղադրվում են շրջադարձերում, թեքանցների վրա, հարկերի մուտքերի ու ելքերի մոտ և տեղակայվում են հատակից 2 և 0.5 մ բարձրության վրա՝ ավտոմոբիլների անցումների ցանկացած կետից տեսադաշտի սահմաններում:

152. Փակ տիպի ջեռուցվող ավտոկայանատեղի ներքին հրդեհաշիջման մեկ շիթ նվազագույն ծախսը և շիթերի թիվը պետք է ընդունել.

1) հրդեհային հատվածամասի 0.5 – 5,0 հազ. մ³ ծավալի համար՝ 2 շիթ՝ յուրաքանչյուրը 2.5 լ/վ ելքով.

2) 5,0 հազ.մ³ –ից ավելի ծավալի համար՝ 2 շիթ՝ յուրաքանչյուրը 5 լ/վ ելքով:

153. Վերգետնյա ավտոկայանատեղերի շենքերի արտաքին հրդեհամարման ջրի հաշվարկային ծախսը պետք է ընդունել՝ ըստ աղյուսակ 4-ի:

Աղյուսակ 4

</>	Շենքերի հրակայունության աստիճանը	Շենքերի կոնստրուկտիվ հրդեհավտանգա- վորության դասը	Շենքերի արտաքին հրդեհաշիջման ջրի ծախսը ավտոկայանատեղերի մեկ հրդեհի համար (լ/վ), շենքերի (հրդեհային հատվածամասի) ծավալների դեպքում (հազ. մ ³)			
			մինչև 5	5-ից մինչև 20	20-ից մինչև 50	50-ից ավել
1"	I, II, III	C0, C1	10	15	20	30
2"	IV	C0, C1	10	15	20	

3"	IV	C2, C3	20	25		
4"	V	չի նորմավորվում	20			

154. Չջեռուցվող ավտոկայանատեղերում և բաց տիպի ավտոկայանատեղերում, այդ թվում՝ մեքենայացված, ինչպես նաև շենքերի վերնածածկի վրա բաց ավտոկայանատեղի տեղաբաշխման դեպքում ներքին հակահրդեհային ջրամատակարարման համակարգերը պետք է կառուցել՝ ցամաքախողովակ եղանակով՝ 89 մմ տրամագծով դուրս հանված խողովակառստով, որը պետք է սարքավորված լինի հակադարձ կափույրներով և շարժական միացման գլխիկներով՝ հրշեջ տեխնիկային միացնելու համար:

155. Յուրաքանչյուր բոքսից դեպի դուրս անմիջական ելքով մեկ և երկհարկանի բոքսային տիպի ավտոկայանատեղերում թույլատրվում է չնախատեսել ներքին հակահրդեհային ջրամատակարարման համակարգ:

156. Երկու և ավելի հարկերով ստորգետնյա ավտոկայանատեղերում ներքին հակահրդեհային ջրամատակարարման համակարգը և հրդեհաշիջման ավտոմատ սարքավորումները պետք է ունենան դուրս հանված միացման գլխիկներով խողովակառստ՝ սարքավորված փականներով և հակադարձ կափույրներով՝ շարժական հրշեջ տեխնիկային միացնելու համար:

157. Սնուցող ցանցի վրա հրդեհային պոմպերի և հակահրդեհային ջրամատակարարման համակարգի ցանցի միջև պետք է տեղակայել հակադարձ կափույրներ:

158. Երկու և ավելի հարկերով ստորգետնյա ավտոկայանատեղերում ներքին հակահրդեհային ջրամատակարարման համակարգը պետք է կառուցվի այլ ներքին ջրամատակարարման համակարգերից առանձին:

159. Բազմահարկ ավտոկայանատեղիները պետք է ապահովված լինեն ջրամեկուսիչ շերտով՝ կեղտաջրերի և այլ հեղուկների ներթափանցման դեմ: Յուրաքանչյուր հարկի հատակների երկայնական և լայնակի թեքությունները, սանդուղքների և ջրահեռացման սարքավորումների տեղադրությունը պետք է նախատեսված լինեն այնպես, որ կանխվի հեղուկների հոսքը դեպի ներքևի հարկեր, թեքահարթակներ, վերելակների հորաններ:

6.3. ԶԵՌՈՒՑՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՀԱԿԱԾԽԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

160. Ավտոկայանատեղերի ջեռուցման, հովացման, օդափոխության, լուսավորության և այլ կայանքները պետք է նախագծված և կառուցված լինեն այնպես, որ դրանց օգտագործման համար պահանջվող էներգիայի քանակը հնարավորինս փոքր լինի՝ հաշվի առնելով տեղանքի կլիմայական պայմանները:

161. Մինչև 25 մարդատար ավտոմոբիլ տարողությամբ չջեռուցվող ավտոտնակներում մեկ արտաքին դարպասից ժամում ոչ ավելի, քան երկու ավտոմոբիլի մուտքի կամ ելքի դեպքում-թույլատրվում է իրականացնել բնական օդափոխություն:

162. Փակ տիպի ավտոկայանատեղերում, ավտոմոբիլների պահման սենքերում պետք է նախատեսել.

1) ներածման-արտածման օդափոխում՝ վնասակար գազերի արտանետումների նոսրացման և հեռացման համար,

2) արտաքին պատերում գտնվող բացվածքներից մեխանիկական դրդմամբ ներիոս օդափոխում չջեռուցվող, փակ տիպի վերգետնյա ավտոկայանատեղերում՝ 18մ-ից ավելի հեռացված գոտիների համար՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 շինարարական նորմերի համաձայն:

163. Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգերը պետք է լինեն առանձին:

164. Արտածման օդատարներում, հակահրդեհային պատնեշների հատման տեղերում պետք է տեղակայվեն նորմալ բաց կրակակասեցման կափույրներ:

165. Հարկի կամ սենքի սահմաններից դուրս պետք է նախատեսել առանձնացված հակահրդեհային պատնեշներով, տարանցիկ օդատարներ՝ EI 30-ից ոչ պակաս հրակայունության սահմանով:

166. Ծխի հեռացումն անհրաժեշտ է նախատեսել արհեստական դրդմամբ, արտաձիգ հորանների միջոցով:

167. Թույլատրվում է նախատեսել բնական ծխահեռացում վերնափեղկերի և պատուհանների վերին մասի բացման համար՝ հատակից 2.2 մ և բարձր (հատակից մինչև վերնափեղկերի տակը) և երդիկների բացվածքների բացման համար

մեքենայացված շարժաքերներով սարքավորված պատուհաններով և երդիկներով: Այս դեպքում հաշվարկով որոշված բացվող բացվածքների ընդհանուր մակերեսը պետք է լինի ոչ պակաս, քան սենքի մակերեսի 0,2 %, իսկ պատուհաններից մինչև սենքի ամենահեռավոր կետի հեռավորությունը չպետք է գերազանցի 18 մ:

168. Շենքերում ներկառուցված ավտոկայանատեղերում բացվող բացվածքների միջոցով ծխահեռացում չի թույլատրվում:

169. Մինչև երկու հարկանի վերգետնյա ավտոկայանատեղերում և միահարկ ստորգետնյա կայանատեղերում թույլատրվում է արտաձման հորանների սարքավորում՝ բնական արտաձմամբ:

170. Մեկուսացված թեքանցներով ավտոկայանատեղերի արտաձման հորաններում յուրաքանչյուր հարկում պետք է նախատեսել ծխային կափույրներ: Ծխահեռացման պահանջվող ծախսերը, հորանների և ծխային կափույրների քանակը որոշվում են հաշվարկով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջների համաձայն:

171. Ստորգետնյա ավտոկայանատեղերում մեկ ծխային հորանին յուրաքանչյուր հարկում թույլատրվում է միացնել 900մ²-ից ոչ ավել մակերեսով ծխային գոտի:

172. Ստորգետնյա ավտոկայանատեղերում ծխահեռացումը թեքանցներից կարող է իրականացվել արտաքին պատնեշների և ծածկերի բացվածքների միջով:

173. Արտաձման հակածխային օդափոխման համակարգերը նախատեսվում են հրդեհի այրման արգասիքները հեռացնելու համար հարկից (հարկաբաժնից).

- 1) ավտոմոբիլների պահման սենքերից,
- 2) մեկուսացված թեքանցներից:

174. Բնակելի և հասարակական շենքերի ստորգետնյա ավտոկայանատեղերի օդափոխության արտանետումները պետք է կազմակերպվեն շենքի ամենաբարձր մասի տանիքի գագաթից՝ 1,5 մ բարձրությամբ:

175. Պատնեշապատված և ստորգետնյա ավտոկայանատեղերի օդափոխության արտանետումները պետք է կազմակերպվեն հողի մակերևույթից առնվազն 3 մ բարձրությամբ և հարակից կոռույցներից՝ առնվազն 15 մ հեռավորության վրա:

176. Ջեռուցվող ավտոկայանատեղերում սենքերի հաշվարկված ջերմաստիճանը պետք է ընդունվի 8°C -ից ոչ պակաս, իսկ ավտոկայանատեղերում տեղակայված սանհանգույցներում և ավտովագման կետերում՝ 18°C -ից ոչ պակաս:

177. Ավտոկայանատեղերի սանդղավանդակներում և վերելակների հորաններում պետք է նախատեսել օդի դիմհար կամ բոլոր հարկերում սարքավորել 1-ին տիպի նախամուտք-անցախուց՝ հրդեհի դեպքում՝ օդի դիմհարով.

1) երկու և ավելի ստորգետնյա հարկերի դեպքում,

2) եթե սանդղավանդակները և վերելակները կապում են ավտոկայանատեղերի ստորգետնյա և վերգետնյա մասերը,

3) եթե սանդղավանդակները և վերելակները կապում են ավտոկայանատեղերը այլ նշանակության շենքերի վերգետնյա հարկերի հետ:

178. Հրդեհի դեպքում պետք է նախատեսել համափոխանակ օդափոխման անջատում:

179. Հակաձխային պաշտպանության համակարգերի միացման կարգը (հաջորդականությունը) պետք է նախատեսի արտածման օդափոխության գործարկման առաջանցում (նախքան ներհոսը):

180. Շենքերում ներկառուցված ավտոկայանատեղերում չի թույլատրվում նախատեսել ընդհանուր սովորական սանդղավանդակներ և ընդհանուր վերելակային հորաններ: Ավտոկայանատեղերի և այլ նշանակության շենքերի գործառական կապի ապահովման համար ավտոկայանատեղի սանդղավանդակների և վերելակային հորանների ելքերը պետք է նախատեսել նշված շենքի հիմնական մուտքի նախասրահում՝ սարքավորելով ավտոկայանատեղի հարկերում 1-ին տիպի նախամուտք-անցախուց՝ հրդեհի դեպքում՝ օդի դիմհարով: Ավտոկայանատեղի, այլ նշանակության շենքի բոլոր հարկերի հետ հաղորդակցության անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսել վերելակային հորանների և սանդղավանդակների հակաձխային պաշտպանություն:

181. Ջեռուցվող ավտոկայանատեղերում, ավտոմոբիլների պահման սենքերում օդի հաշվարկային ջերմաստիճանը պետք է լինի 5°C :

182. Չջեռուցվող ավտոկայանատեղերում, ըստ անհրաժեշտության, պետք է նախատեսել օժանդակ սենքերի ջեռուցում:

183. Փակ տիպի ավտոկայանատեղերում պետք է նախատեսել CO-ի պարունակության չափման սարքերի և անձնակազմի շուրջօրյա հերթապահության սենքերում՝ CO-ի հսկողության համար համապատասխան ազդանշանումով սարքերի տեղակայում:

184. Հակածխային պաշտպանության համակարգերի կառավարումը պետք է իրականացվի ավտոմատ կերպով՝ հրդեհային ազդասարքերից հեռակառավարմամբ, հակահրդեհային համակարգերի կառավարման կենտրոնական վահանակից, ինչպես նաև ավտոկայանատեղերի հարկերի մուտքերում, հարկերի վրա սանդուղքների հարթակներում (հրդեհային ծորակների պահարաններում) տեղակայված ձեռքի գործարկման կոճակներով կամ մեխանիկական սարքվածքներով: Հրդեհային պաշտպանության համակարգերի տարրերը (փականները, հորանները, օդատարները, կափույրները, ծխընդունման սարքվածքները) պետք է նախատեսել՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 շինարարական նորմերի համաձայն:

185. Հակածխային ներածման-արտածման օդափոխման հիմնական պարամետրերի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ելակետային տվյալները.

- 1) ավտոկայանատեղերի հարկաբաժիններում հրդեհի բռնկման ռիսկերը,
- 2) հարկաբաժինների հարաչափերը՝ շահագործվող մակերեսը, պատող կոնստրուկցիաների մակերեսը և այլն,
- 3) տեսակարար հրդեհային բեռնվածքը,
- 4) տարհանման ելքերի բացվածքների դիրքը (հրդեհի բռնկման հարկից մինչև արտաքին ելքերը),
- 5) արտաքին օդի պարամետրերը:

186. Հակածխային արտածման օդափոխման համակարգերում հակահրդեհային (այդ թվում՝ ծխային) կափույրները պետք է ունենան սահմանված չափի ծխագազաթափանցելիություն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 շինարարական նորմերի պահանջների համաձայն:

187. Ավտոկայանատեղի պատերին կոնդենսատը կանխելու համար անհրաժեշտ է պահպանել նախագծային ջեռուցման և օդափոխության ռեժիմները:

188. Ստորգետնյա ավտոկայանատեղում ջերմաստիճանների տարբերությունից կոնդենսատի առաջացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է սառչելու խորության չափով շեղակի (վուտի) կիրառմամբ նախատեսել ջերմամեկուսացում՝ պաշտպանիչ շերտով:

6.4. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

189. Ավտոկայանատեղերի էլեկտրատեխնիկական սարքվածքները պետք է նախատեսվեն՝ ՀՀ կառավարության 2023թվականի ապրիլի 21-ի N592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ»-ի պահպանմամբ:

190. Ավտոկայանատեղերը, ըստ էլեկտրամատակարարման հուսալիության ապահովման՝ դասակարգվում են ՀՀ քաղաքաշինության նախարարի 04.08.2004թ. N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջների համաձայն:

191. Հրդեհային պաշտպանության համակարգերը սնուցող մալուխային գծերը պետք է պատրաստված լինեն պղնձե միջուկներով հրակայուն մալուխներից: Դրանց օգտագործումը այլ էլեկտրական ընդունիչների համար թույլատրելի չէ:

192. Ստորգետնյա ավտոկայանատեղերում պետք է կիրառել այրում չտարածող պատյաններով էլեկտրական մալուխներ:

193. Հրդեհային պաշտպանության մալուխային գծերը և էլեկտրական լարերը հրդեհային պայմաններում իրենց գործառույթները կատարելու համար պետք է գործունակ մնան հաշվարկային անհրաժեշտ ժամանակահատվածում:

194. Հակահրդեհային սարքվածքները սնուցող էլեկտրամալուխները պետք է անմիջականորեն միացվեն շենքերի (շինությունների) ներս մտցված վահանակներին:

195. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորող սարքին միացումը պետք է իրականացվի անվտանգություն ապահովող ընթացակարգով:

196. Պետք է ընդունել, որ բնականոն շահագործման ժամանակ յուրաքանչյուր լիցքավորման սարք սպառում է անվանական հոսանք: Քանի որ էլեկտրամոբիլների լիցքավորման կայանի բոլոր լիցքավորման սարքերը կարող են օգտագործվել

միաժամանակ, ապա սնուցման ցանցի ընդհանրական բեռնվածքի գործակիցը պետք է ընդունել 1:

197. Լիցքավորման գործընթացի եղանակից և գործառնական կիրառման նշանակությունից կախված՝ լիցքավորման գործողությունն իրականացվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թվականի ապրիլի 14-ի N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 շինարարական նորմերի պահանջների համաձայն:

198. Ավտոկայանատեղերում սենքերի լուսավորումը պետք է նախատեսել ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմերի համաձայն:

199. Փակ տիպի ավտոկայանատեղերում՝ յուրաքանչյուր հարկի մուտքի մոտ, պետք է տեղակայվեն վարդակներ՝ միացված I կարգի էլեկտրամատակարարման ցանցին՝ էլեկտրաֆիկացված հրդեհատեխնիկական սարքավորանքների օգտագործման հնարավորության համար:

200. Ավտոկայանատեղերի տարածքներում տեղադրված լուսավորող սարքերը պետք է ունենան այդ տարածքներին հարող փողոցներով և ճանապարհներով երթևեկող ավտոմոբիլի վարորդի ուղղությամբ լույսի այնպիսի ուժգնություն, որը կազմում է այդ սարքերի լուսային հոսքի 1 կլմ-ին ընկնող առնվազն 30 կդ: Չի թույլատրվում հենասյուների և կառույցների տանիքներին ու շվաքարաններին տեղադրված լուսարձակներն ուղղորդել փողոցի կամ ճանապարհի երթևեկելի մասի վրա:

201. Ցածր ածխածնային զարգացման, ջերմոցային ազդեցությունը նվազեցնելու և էներգաարդյունավետությունը խթանելու նպատակով բաց ավտոկայանատեղերում պարտադիր կարգով պետք է տեղադրվեն էլեկտրամոբիլների արագ լիցքավորման սարքեր:

202. Ծածկերը հատող մալուխային ցանցերը պետք է տեղադրվեն մետաղական խողովակներում կամ EI45-ից ոչ պակաս հրակայունության սահմանով հաղորդակցուղիների որմնախորշերում:

203. Արագընթաց լիցքավորման համար պետք է օգտագործել հատուկ լիցքավորման սարքվածքներ, որոնք գործում են բարձր լարման հոսանքի մակարդակներում:

204. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորման համար օգտագործվող էլեկտրական սարքավորումների պատյանների պաշտպանության աստիճանը պետք է լինի առնվազն IP44:

205. Փոփոխական հոսանքի լիցքավորման սարքվածքին մատուցվող սնուցման լարումը չի կարող գերազանցել 1000 Վ-ը: Լիցքավորման սարքը պետք է ապահովի իր աշխատանքի ճշգրտությունը ստանդարտ անվանական լարման (ըստ ԳՕՍՍ 29322-2014 ստանդարտի) արժեքից $\pm 10\%$ շեղման պայմաններում: Հաճախականության անվանական արժեքը $50 \pm 1\%$ է՝ համաձայն ԳՕՍՍ 32144 -ի՝ «Էլեկտրական էներգիա. էլեկտրամագնիսական տեխնիկական միջոցների համատեղելիություն. Ընդհանուր նշանակության էլեկտրամատակարարման համակարգերում էլեկտրաէներգիայի որակի նորմեր»-ի պահանջների:

206. Էլեկտրալիցքավորման կայանների համար վայր ընտրելիս պետք է հաշվի առնել համապատասխան հզորության առկայությունը էլեկտրամատակարարման ենթակառուցվածքներում (կամ հզորության աղբյուրի վերակառուցման հնարավորությունը)՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թվականի ապրիլի 14-ի N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 շինարարական նորմերի համաձայն:

207. Էլեկտրամոբիլների լիցքավորման կայան նախաձեռնելիս պետք է հաշվի առնել՝ էլեկտրամոբիլների գաբարիտային չափերը, էլեկտրամոբիլը լիցքավորման կանգնեցնելու ձևը, էլեկտրամոբիլների լիցքավորման սարքվածքի մալուխի երկարությունը տարբեր մակնիշի էլեկտրամոբիլների համար: Լիցքավորման սարքվածքի հեռավորությունը լիցքավորման՝ կայանելու համար նախատեսված հարթակից պետք է ընդունել՝ համաձայն արտադրողի տեխնիկական պայմանների՝ հաշվի առնելով, մասնավորապես, էլեկտրամոբիլի ավտոկանգառատեղերի չափսերը 3000×6000 մմ²-ի շրջանակներում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թվականի ապրիլի 14-ի N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 շինարարական նորմերի համաձայն:

208. Էլեկտրամոբիլների լիցքավորման սարքերը պետք է պաշտպանված լինեն խոնավության և պինդ մասնիկների ներթափանցումից առնվազն IP54 մակարդակով՝ ըստ ԳՕՍՍ 14254 -ի՝ «Պատյաններով ապահովվող պաշտպանության աստիճաններ (կոդ IP)»-ի պահանջների:

209. Էլեկտրալիցքավորման կայանների նախագծման, կառուցման և շահագործման փուլերում պետք է պահպանվեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025թվականի ապրիլի 14-ի N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 շինարարական նորմերի, ՀՍ ԳՕՍ Ռ ԻՍՕ 6469-1-2025-ի «Էլեկտրաքարշով ճանապարհային տրանսպորտ. Անվտանգության պահանջներ. Մաս 1. Էներգիայի կուտակման վերալիցքավորվող համակարգեր», ԳՕՍ ԻԷԿ 61851-1-2017 -ի՝ «Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Մաս I. Ընդհանուր պահանջներ»-ի, ԳՕՍ ԻԷԿ 62196-1-2024 -ի՝ «Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Խրոցակներ (երկժանիներ), խրոցակային վարդակներ, շարժական վարդակներ և էլեկտրական ներանցման սարքեր տրանսպորտային միջոցների համար. Մաս I. Ընդհանուր պահանջներ»-ի, ԳՕՍ ԻԷԿ 62196-2-2024 -ի՝ «Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Խրոցակներ (երկժանիներ), խրոցակային վարդակներ, շարժական վարդակներ և էլեկտրական ներանցման սարքեր տրանսպորտային միջոցների համար. Մաս 2. Փոփոխական հոսանքի ցանցի ձողային հարակցիչների և արմատուրի տրամաչափային համատեղելիությանը և փոխադարձ փոխարինելիությանը ներկայացվող պահանջները»-ի, ԳՕՍ 34695.21-1-2020 -ի՝ «Էլեկտրամոբիլների հաղորդալարային լիցքավորման համակարգ. Մաս 21-1. Էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջներ էլեկտրամոբիլի ներքին լիցքավորման սարքվածքը հաղորդալարերով փոփոխական կամ հաստատուն հոսանքի աղբյուրին միացնելու համար»-ի, ՀՍ ԳՕՍ Ռ 50571.7.722-2025 -ի՝ «Ցածրավոլտ էլեկտրակայանքներ. Մաս 7-713. Հատուկ էլեկտրակայանքներին կամ դրանց տեղադրման վայրերին ներկայացվող պահանջներ. էլեկտրամոբիլների լիցքավորման աղբյուրներ» -ի պահանջները:

6.5. ԱՎՏՈՄԱՏ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄ ԵՎ ԱՎՏՈՄԱՏ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՈՒՄ

210. Ավտոկայանատեղերում կիրառվող ավտոմատ հրդեհաշիջման և ազդանշանման համակարգերը պետք է համապատասխանեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01.01-2024 շինարարական նորմերի և ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014թվականի մարտի 17-ի N78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 շինարարական նորմերին:

211. Փակ տիպի ավտոկայանատեղերում, անկախ մակերեսի չափից (բացառությամբ անհատական բնակելի տների), տեղադրվում են.

1) հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ՝ հրդեհաշիջման և հրդեհի վայրի հայտնաբերման համար,

2) հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ (<SU<)' հրդեհի տագնապի ազդարարման համար,

3) հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգ (<SUՓԻ<)' հրդեհի տագնապի ազդանշանը օբյեկտից կապի հնարավոր միջոցով լիազոր մարմնին հաղորդելու համար:

212. Հրդեհաշիջման, հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքների, հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգի տեսակը, շիջման ձևը, կրակմարիչ միջոցները որոշվում են նախագծող կազմակերպության կողմից:

213. Ինքնաշխատ հրդեհաշիջման և հակահրդեհային ազդանշանային պաշտպանության համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պարունակեն հրդեհային ազդարարման համակարգերի նկարագրությունը, հակահրդեհային պաշտպանության համար նախատեսված սարքավորումների նկարագիրը և հիմնավորումը, որոնք նախատեսված են հրդեհի բռնկման ժամանակ մարդկանց անվտանգ տարահանման, հրդեհի մարման և նրա տարածումը կանխելու համար, մարդկանց կյանքի և առողջության, գույքի ոչնչացման ռիսկերի գնահատականը, հակահրդեհային անվտանգության ապահովման տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների նկարագրությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով հաստատված շինարարական նորմերի համաձայն:

214. Փակ տիպի ավտոկայանատեղերը պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով հեղուկ նավթային գազով և սեղմված բնական գազով աշխատող շարժիչներով (գազաբալոններով) ավտոմոբիլների համար հակահրդեհային նորմերի պահպանման չափորոշիչները:

215. Փակ տիպի ավտոկայանատեղերը պետք է կառուցվեն այնպես, որ հրդեհի դեպքում.

1) կառուցվածքի կրող տարրերը հաշվարկված լինեն որոշակի ժամանակահատվածում չփլուզվելու պայմանով,

2) հնարավորինս սահմանափակ լինի հրդեհի առաջացման և ծխի տարածման հնարավորությունը,

3) հնարավորինս սահմանափակ լինի կրակի տարածումը հարակից շենքերի և շինությունների վրա,

4) ավտոկայանատեղում գտնվող մարդիկ հեշտությամբ կարողանան լքել տարածքը կամ փրկվել այլ միջոցների կիրառմամբ,

5) հնարավորինս ապահովվի փրկարարական խմբերի անվտանգությունը:

216. Նոր կառուցվող, վերակառուցվող և տեխնիկապես վերասարքավորվող ավտոկայանատեղերի հակահրդեհային ավտոմատ (ինքնաշխատ) համակարգերի նախագծումը, հավաքակցումը և շահագործումն իրականացվում են՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01.01-2024 շինարարական նորմերի համաձայն:

217. Առանց տեխնիկական սպասարկման և նորոգման ավտոկայանատեղերը կազմակերպվում են, ըստ գործառնական հրդեհային վտանգավորության, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 շինարարական նորմերի պահանջների (ընդգրկված են Գ5.2(Ֆ5.2) դասում):

218. Ավտոկայանատեղերը պետք է սարքավորվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով:

219. Ավտոկայանատեղերում հրդեհի ազդանշանման համակարգերը պետք է սարքավորել՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թվականի փետրվարի 22-ի N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01.01-2024 շինարարական նորմերի համաձայն: Մեկ հարկանի առանձնացված, դեպի դուրս անմիջական ելքով ավտոտնակներով ավտոկայանատեղերում թույլատրվում է չնախատեսել հրդեհի ազդանշանման համակարգեր, եթե յուրաքանչյուր ավտոտնակում կայանում է միայն 1 ավտոմոբիլ:

220. Ավտոկայանատեղերի յուրաքանչյուր հարկի հրդեհային հատվածամասից (բացի մեքենայացված ավտոկայանատեղերից) պետք է նախատեսվեն երկուսից ոչ պակաս տարակենտրոնացված տարհանման ելքեր՝ անմիջականորեն դեպի դուրս կամ աստիճանավանդակ: Թույլատրվում է տարհանման ելքերից մեկը նախատեսել մեկուսացված թեքանցի վրա: Թեքանցով մուտքերում մայթերի անցամասը դեպի կիսահարկերի սանդղավանդակ թույլատրվում է համարել տարհանումային:

221. Ավտոկայանատեղում տեղադրված սենքերից տարհանման ելքերը թույլատրվում է նախատեսել ավտոմոբիլների պահման սենքերի միջով: Հաճախորդների ուղեբեռի պահեստանոցը թույլատրվում է տեղաբաշխել միայն ավտոկայանատեղի առաջին (ուղևորանիստ) հարկում:

222. Պահման առավել հեռու տեղից մինչև մոտակա տարհանման ելքը թույլատրելի հեռավորությունը պետք է ընդունել՝ համաձայն աղյուսակ 5-ի:

Աղյուսակ 5

Հ/Հ	Ավտոկայանատեղերի տիպերը	Հեռավորությունը մինչև մոտակա տարհանման ելքը (մ)՝ պահման տեղերի դասավորության դեպքում	
		Տարհանման ելքերի միջև	Սենքի փակուղային մասում
1.	Ստորգետնյա	40	20
2.	Վերգետնյա	60	25
3.	Տարհանման ուղիների երկարության չափումը կատարվում է անցամասերի և երթանցների միջին գծով՝ հաշվի առնելով ավտոմոբիլների դասավորությունը:		

223. Ավտոկայանատեղերի շենքերում, եթե թեքանցը միաժամանակ ծառայում է որպես տարհանման ուղի, ապա թեքանցի մեկ կողմից սարքավորվում է մայթ՝ 0.8 մ-ից ոչ պակաս լայնությամբ:

224. Թեքանցի կամ հարակից հրդեհային հատվածամասի վրա՝ դարպասների մոտ կամ դարպասներում, ելքի համար պետք է նախատեսել հակահրդեհային դուռ (դռնակ)՝ 15սմ-ից ոչ ավել շեմքի բարձրությամբ:

225. Հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը (բացառությամբ անհատական բնակելի տների) մինչև 25 ավտոմոբիլի համար անհասցե է, իսկ 26 և ավելի ավտոմոբիլների համար՝ հասցեային:

226. Հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգերով սարքավորելու պահանջները որոշվում են՝ հաշվի առնելով ավտոկայանատեղերի դասակարգումն ըստ տիպերի.

- 1) մինչև 25 ավտոմոբիլ՝ 2-րդ տիպ,
- 2) 26-100 ավտոմոբիլ՝ 3-րդ տիպ,
- 3) 100 և ավելի ավտոմոբիլ՝ 4-րդ տիպ:

227. Ավտոտնակների և ավտոկայանատեղերի սենքերը դասակարգվում են պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության Վ3 կարգի 2-րդ խմբում:

Ավտոտնակը պետք է առանձնացված լինի տան այլ տարածքներից հրակայուն պատնեշներով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 07.11.2022թ. N27-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-02-2022 «Բնակելի շենքեր. Մաս II. Անհատական բնակելի տներ» շինարարական նորմերի պահանջների համաձայն:

228. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը ստորգետնյա և վերգետնյա փակ ավտոկայանատեղերում (բացառությամբ անհատական բնակելի տների) նախատեսվում է.

- 1) մինչև 10 կայանատեղի համար՝ նրբաջրային կամ փոշեշիջում,
- 2) 11 և ավելի կայանատեղի համար՝ ջրային:

229. Ավտոկայանատեղերի թեքանցների տակի փակ սենքերում թույլատրվում է տեղակայել միայն հրդեհի չչակային և լուսային ազդարարիչներ:

230. Փակ տիպի, երկու և ավելի հարկանի վերգետնյա ավտոկայանատեղերը (բացառությամբ յուրաքանչյուր բոքսից անմիջականորեն դեպի դուրս ելքով ավտոկայանատեղերի և մեքենայացված ավտոկայանատեղերի) պետք է սարքավորվեն

տեղեկացման համակարգերով. մինչև 100 ավտոկանգառատեղ տարողությամբ՝ 1-ին տիպի, իսկ 100 ավտոկանգառատեղից ավելի՝ 2-րդ տիպի:

231. Երկու և ավելի հարկով ստորգետնյա ավտոկայանատեղերը պետք է սարքավորվեն տեղեկացման համակարգերով. մինչև 50 ավտոկանգառատեղ տարողությամբ՝ 2-րդ տիպի, 50-ից մինչև 200՝ 3-րդ տիպի, 200-ից ավել՝ 4-րդ կամ 5-րդ տիպի:

232. Ավտոկայանատեղի յուրաքանչյուր սենքի մակերեսը չի կարող ավելի լինել 3000 մ²-ից:

233. 50 և ավելի կայանատեղի ունեցող ավտոկայանատեղերում գլխավոր մուտքի մոտ անհրաժեշտ է նախատեսել սենք՝ կապի այլընտրանքային հանգույցի, առաջնային հրդեհաշիջման սարքավորումների, անհատական պաշտպանության միջոցների և հակահրդեհային գործիքների տեղադրման համար:

234. Գազաբալունային ավտոմոբիլների համար փակ ավտոկայանատեղերը պետք է նախատեսվեն I, II, III, IV դասի հրդեհային հրակայունության կոնստրուկցիաներով՝ CO հրդեհային վտանգավորության պայմանների համար:

235. Բազմահարկ ավտոկայանատեղերում ջրի կամ փրփուրով հրդեհաշիջման ավտոմատ համակարգեր օգտագործելիս ջրցանների տեղադրումը յուրաքանչյուր հարկում պետք է ապահովի ջրի կամ փրփուրի լիարժեք հասանելիություն:

236. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորման սարքավորումներով փակ ավտոկայանատեղերը, անկախ տարածքից, պետք է հագեցած լինեն հրդեհաշիջման ավտոմատ համակարգերով:

237. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների արագ լիցքավորման սարքավորումները թույլատրվում է տեղադրել բացօթյա տարածքներում:

238. Փակ ավտոկայանատեղերում էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորման սարքավորումներ կարող են տեղադրվել համապատասխան տեխնիկական առաջադրանքով իրականացված նախագծի համալիր փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

239. Պատնեշապատված ավտոկայանատեղերի հրդեհավտանգության դասը պետք է լինի ոչ ցածր CO-ից, հրակայունության աստիճանը՝ ոչ ցածր II-ից:

240. Պատնեշապատված երկհարկանի ավտոկայանատեղիների հարկերը հրակայուն առաստաղով բաժանելիս յուրաքանչյուր հարկի համար կարող են կիրառվել հրդեհային անվտանգության պահանջներ, ինչպես միահարկ շենքի համար:

241. Ստորգետնյա ավտոկայանատեղերում պահանջվող հրակայունության աստիճանը, թույլատրելի հարկայնությունը և հրդեհային հատվածամասի սահմաններում հարկի մակերեսը պետք է ընդունել՝ ըստ աղյուսակ 6-ի:

Աղյուսակ 6

Հ/Հ	Շենքերի (շինությունների) հրակայունության աստիճանը	Շենքերի (շինությունների) կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորության դասը	Հրդեհային հատվածամասի հարկայնությունը	Հարկի մակերեսը հրդեհային հատվածամասի սահմաններում (մ ²)
1.	I	C0	5	3000
2.	II	C0	3	3000

242. Լիցքավորող սարքերը հրդեհային ազդանշանային գործարկման դեպքում ինքնաշխատ համակարգի միջոցով պետք է հոսանքագրկվեն:

243. Հրդեհի դեպքում պետք է նախատեսվի ընդհանուր օդափոխության ավտոմատ անջատում:

244. Պահանջվող հրակայունության աստիճանը, թույլատրելի հարկայնությունը և հրդեհային հատվածամասի սահմաններում հարկի մակերեսը պետք է ընդունել՝ ըստ աղյուսակ 7-ի:

Աղյուսակ 7

Հ/Հ	Շենքերի (շինությունների) հրակայունության աստիճանը	Շենքերի (շինությունների) կոնստրուկտիվ հրդեհային վտանգավորության դասը	Հրդեհային հատվածամասի հարկայնությունը	Հարկի մակերեսը հրդեհային հատվածամասի սահմաններում (մ ²)	
				միահարկ շենքեր	բազմա- հարկ շենքեր
1"	I, II	C0	9	10400	5200
2"		C1	2	3500	2000

3"	III	C0	6	7800	3600
4"		C1	2	2000	1200
4"	IV	C0	6	7300	2000
5"		C1	2	2600	800

6.6. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

245. Կապի և ազդանշանային համակարգերի տեղադրումը պետք է նախատեսվի՝ հաշվի առնելով հրդեհային խցերի բաժանումների քանակը:

246. Ավտոկայանատեղերը պետք է հագեցած լինեն՝

- 1) անվտանգության ազդանշանային համակարգով,
- 2) հանրային հեռախոսային համակարգով,
- 3) դիսպետչերական (տեխնոլոգիական) կապի համակարգով,
- 4) մուտքի և ելքի վերահսկման և կառավարման համակարգով,
- 5) անվտանգության տեսահսկողության համակարգով,
- 6) հրդեհային ազդանշանային համակարգով,
- 7) նախազգուշացման և տարհանման կառավարման համակարգով:

Համակարգերի վերջնական ցանկը որոշվում է ավտոկայանատեղի նախագծային առաջադրանքով:

247. Երկու և ավելի հարկ ունեցող փակ տիպի վերգետնյա, ստորգետնյա և մեքենայացված ավտոկայանատեղերի տեխնոլոգիական կապի համակարգում, նախագծային առաջադրանքի համաձայն, պետք է ներառվի ապարատային և ծրագրային համալիր՝ գործունեության տարբեր ոլորտներում արտակարգ իրավիճակների և քաղաքային ծառայություններին անհապաղ հաղորդագրություններ ուղարկելու և ստանալու նպատակով:

248. Զգուշացման և տարհանման կառավարման համակարգը պետք է ապահովված լինի համապատասխան սարքերով՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.06.2015 թ. N595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոններ»-ի համաձայն:

249. Փակ տիպի ավտոկայանատեղերում պետք է նախատեսվեն CO գազի խտության չափման սարքեր՝ շուրջօրյա մշտադիտարկում իրականացնելու նպատակով:

250. Անվտանգության տեսահսկողության համակարգը պետք է ապահովի ավտոկայանատեղի անհրաժեշտ տարածքներում տեսաազդանշանների և տեսապատկերների ձևավորումը և արխիվացումը՝ իրավիճակի մշտադիտարկման և իրավիճակի հետագա վերլուծության համար: Անվտանգության տեսահսկողության համակարգը պետք է մշտադիտարկման ենթարկի ավտոկայանատեղի հետևյալ տարածքները՝

- 1) մուտքերը և ելքերը,
- 2) վերելակների և սենքերի նախասրահները,
- 3) բոլոր ավտոկանգառատեղերը:

251. Ավտոկայանատեղի անցակետերում պետք է միացված լինի հանրային հեռախոսակապ:

252. Փակ տիպի ավտոկայանատեղը պետք է ունենա տարածքի մուտքը և ելքը սահմանափակող հեռակառավարվող համակարգ:

7. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

253. Ավտոկայանատեղի յուրաքանչյուր հարկում ելքերը պետք է լինեն լավ տեսանելի և ցուցանակներով:

254. Ավտոկայանատեղերի ներսում ավտոմոբիլների շարժման ուղիները պետք է սարքավորվեն վարորդներին կողմնորոշող ցուցանակներով:

255. Արտակարգ տարհանման լուսավորության ցանցին պետք է միացված լինեն՝

- 1) տարհանման ելքերը (յուրաքանչյուր հարկում),
- 2) ավտոմոբիլների շարժման երթուղիները,
- 3) հրդեհաշիջման սարքավորումների միացման գլխիկների տեղերը,
- 4) հրդեհաշիջման հիմնական սարքավորումների տեղերը,
- 5) հիդրանտների տեղերը,
- 6) հրդեհաշիջման պոմպակայանի մուտքերը:

256. Ավտոմոբիլների շարժման ուղղությունների և գլխավոր նպատակային կետերի (հարկերի վրա ելքերը, հրդեհային ծորակների, կրակմարիչների տեղակայման

տեղերը և այլն) նշման համար պետք է կիրառել լուսավորվող ներկեր և լյումինիսցենտային ծածկույթ:

257. Լիցքավորման սարքի կառուցվածքը և տեղակայման վայրը պետք է ապահովեն դրանց անխափան և անվտանգ աշխատանքը ծյան, անձրևի և ուժեղ քամիների պայմաններում:

258. Էլեկտրամոբիլների կայանման ավտոկանգառատեղերի չափսերը պետք է ընդունել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.04.2025թ. N 10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 43-01-2025 «Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջների համաձայն՝

1) 2500×6000 մմ²՝ կայանատեղերը երթանցի առանցքին զուգահեռ, մայթի երկարությամբ տեղակայման դեպքում,

2) $3\ 000 \times 6000$ մմ²՝ կայանատեղերն այլ պայմաններում տեղակայելու դեպքում:

259. Էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների լիցքավորման համար նախատեսված կայանատեղերը պետք է ունենան «Էլեկտրամոբիլների լիցքավորման կայան» ցուցանակը:

260. Լիցքավորման սարքի հասանելիությունն ապահովվում է էլեկտրական մալուխի միացման բռնակի 0.7-0.8 մ բարձրությամբ տեղադրմամբ: Էլեկտրաէներգիայի ծավալի և արժեքի ցուցիչների ցուցադրման թվանշանները պետք գտնվեն 1.45-1.75 մ բարձրության վրա:

261. Ավտոմոբիլների պահման համար սենքերը և թեքանցները պետք է ունենան ավտոկայանատեղերում ծխելն արգելող ցուցանակներ:

262. Բնակելի շենքերի տեղամասում բնակիչների և հյուրերի ավտոմոբիլների կայանման, արտադրական և այլ օբյեկտներում՝ սպասարկման, այդ թվում՝ բեռնաթափման նպատակով ավտոմոբիլների կայանման հարթակները չպետք է խոչընդոտեն ավտոմոբիլների միջբակային հաղորդակցությունը:

263. Բնակելի շենքերի նկուղային կամ որմնախարսխային (կիսանկուղային) հարկերում, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղերում պետք է նախատեսվեն քաղաքացիական պաշտպանության համար հարմարեցված շինություններ (սենքեր)՝ ապաստարաններ և թաքստոցներ՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի

31.03.2014թ. N93-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերի պահանջների:

264. Ավտոկայանատեղի տարածքում գտվող սենքերում թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակները չպետք է գերազանցեն ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ. N533-Ն հրամանով հաստատված ՀՆ N 2.2.4-009-06 «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» -ի ցուցանիշները:

265. Բացօթյա ավտոկայանատեղերում ճանապարհային պատվածքի միջին լուսավորվածությունը՝ $E_{միջ}$, պետք է համապատասխանի աղյուսակ 8-ում բերված ցուցանիշներին:

Աղյուսակ 8

Հ/Հ	Լուսավորվող օբյեկտներ	Էմիջ (լք), առնվազն
1"	Ավտոկայանների տարածքի մնացած երթևեկելի մասը	10,0
2"	Բացօթյա ավտոկայանատեղեր, ինչպես նաև փողոցներից դուրս վճարովի կայանատեղեր, միկրոշրջաններում բացօթյա ավտոկայանատեղեր, բոքսային տեսակի ավտոտնակների շարքերի միջև երթուղիներ	6,0

266. Այրվող քսուքային նյութեր տեղափոխող ավտոմոբիլների պահումը պետք է նախատեսել բաց հարթակներում կամ մեկ հարկանի ավտոկայանատեղերում՝ պահպանելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի պահանջները:

267. Կոնստրուկցիաների բաց մակերևույթների հատուկ կրակապաշտպան պատվածքներն ու տոգորումը պարբերաբար պետք է վերականգնել կամ փոխել՝ դրանց քայքայման (լրիվ կամ մասնակի շարքից դուրս գալու) կամ պատվածքի ու տոգորման տեխնիկական փաստաթղթերում նախատեսված շահագործման ժամկետներին համապատասխան:

268. Արտաքին թեքանցները և արտաքին սանդուղքները առաջնահերթ կարգով պետք է մաքրվեն ձյունից և սառույցից:

269. Ավտոմոբիլների պահման համար նախատեսված առանձին բոքսերի օգտագործումը կամ վերասարքավորումը՝ որպես վերանորոգման աշխատանքների իրականացման համար սենքեր, չի թույլատրվում:

270. Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար պետք է ապահովվի ավտոկայանատեղիներից օգտվելու մատչելիություն: Ավտոկայանատեղերը պետք է հագեցած լինեն անհրաժեշտ սարքավորումներով ու հարմարանքներով՝ ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախարարի 10.11.2006թ. N253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) շինարարական նորմերի:

271. Ավտոկայանատեղերում հաշմանդամների ավտոմոբիլների համար անհրաժեշտ է հատկացնել 10%-ից ոչ պակաս (առնվազն մեկ) տեղ: Այդ տեղերը պետք է նշվեն միջազգային պրակտիկայում ընդունված նշաններով:

272. Հաշմանդամների ավտոմոբիլների կանգառման գոտու լայնությունը պետք է լինի 3,5 մ-ից ոչ պակաս:

273. Հաշմանդամի անձնական ավտոտրանսպորտի համար հատկացված տեղերը պետք է լինեն հաշմանդամի համար մատչելի՝ մուտքի մոտ:

274. Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող ավտոմոբիլների կայանման տեղերը պետք է առանձնացվեն հատուկ գծանշումներով և լուսավորվածությամբ՝ ըստ նախագծային առաջադրանքի, համընդհանուր դիզայնի սկզբունքներին համապատասխան:

275. Ավտոկայանատեղից ավտոմոբիլի ելքային արագությունը չպետք է գերազանցի 30 կմ/ժ:

276. Ավտոկայանատեղից ելքի հատվածում պետք է տեղադրվի «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանը:

277. Ավտոկայանատեղից ելքի ժամանակ ավտոմոբիլի վարորդը պետք է ճանապարհը զիջի ճանապարհով ընթացող տրանսպորտային միջոցներին՝ անկախ դրանց հետագա երթևեկության ուղղությունից:

278. Ավտոկայանատեղ մտնող կամ ելքի սպասող ավտոմոբիլները չպետք է խոչընդոտեն տրանսպորտային միջոցների տարանցիկ երթևեկությունը և հետիոտնների շարժը: